№ 227 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15

1905

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15 № 227

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tifflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրութեան կողմից։ «Մշակը» առաջիկայում։ Գաղափարի համար։ Ազատ գիտութեան դատը։ Վերջին տեղեկութիւններ։ ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մամուլ։ Մտքեր և փաստեր. Հասարակական և քաղաքական հարցեր. Կորչի արտօնութիւնը. Կրկին Կ. Կոստանեան. Թատրոն և երաժշտութիւն. Հայկական քրոնիկ. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Քաղաքական աշխարհի վիճակը. Նամակ Պարսկաստանից. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Այսօրվանից բաց ենք անում «Մշակի» բաժանորդագրութիւնը 1906 թւականի համար։

«Մշակի» բաժանորդագինը կը մնայ նոյնը, ինչպէս առաջ։ «Մշակի» գիրքի մեծացնելը ոչ մի յաւելում չի առաջացնի ոչ տարեկան բաժանորդագրութեան և ոչ հատով ծախւող համարների գնի վրա։

Մի քանի ժամանակից յետոյ մենք կուղարկենք Թիֆլիսից դուրս գտնւող մեր բաժանորդներին պօստային փոխադրական բլանկներ՝ թեթևացնելու համար լրագրին ստորագրւել ցանկացողների գործը։

Յիշեցնում ենք, որ ապառիկ բաժանորդագրութիւն չենք ընդունում։

«ՄՇԱԿԸ» ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ

«Մշակը» մեծ գիրքով և ծաւալով։

Ահա նա դրված է ընթերցողի առաջ, իբրև իրողութիւն։

«Մշակի» ընդարձակելը խմբագրութեան վաղուցվայ հոգսերից և անհանգստներից մէկն է եղել միշտ և մենք աստիճանաբար առաջ ենք գնացել, երեքօրեայ հրատարակութիւնը դարձնելով ամենօրեայ և աւելացնելով իւրաքանչիւր համարի պարունակութիւնը։ Եւ այժմ միայն մեզ կարող ենք զգում աւելի լաւ ընդարձակելու գործը։

Լրագրի հրատարակութիւնը պահանջում է միջոցներ, որոնք ապահովվում են նրա եկամուտներով։ Կարելի էր անկասկած դիմել և կողմնակի միջոցների, սակայն այդ մենք չարինք մի քանի նկատումներով։

«Մշակի» համար թանգ է եղել նրա բարոյական անկախութիւնը, նրա գրական և հասարակական անկաշառ և անաստան դիրքը։ Եւ այդ պատճառով նա չէ ցանկացել դիմել ուրիշներին և նպաստ խնդրել իր համար, լաւ հասկանալով, որ այն դէպքերում, երբ հրապարակական գործունէութիւնը կը պահանջէ դառն և համարձակ մաքառում, կողմնակի նպաստները կարող են կամայ ակամայ սանձ դնել գրողների վրա և շղթայել նրանց ձեռքերը։

Ծանր է կապիտալի լուծը գրական խօսքի և հրապարակախօսական գործունէութեան վրա, ծանր է և մահաբեր։

Այդ ցոյց են տալիս շատ օրինակներ։ Մենք կարող ենք «Մշակի» անցեալից առաջ բերել մի միջնադէպ։

Երբ «Մշակի» հիմնադիր Գրիգոր Արծրունին վախճանվեց, «Մշակի» բարեկամների մի խումբ միտք յղացաւ կազմել մի ֆօնդ և ապահովել լրագրի նիւթականը։ Այդ միտքը բնական մի արդիւնք էր այն բուռն ցանկութեան, որ ունէր «Մշակի» բարեկամների շրջանը։ Եւ եթէ երբ և իցէ կարող են կազմվել ֆօնդեր գրական այնպիսի գործերի համար, որտեղ կան ուղղութեան և որոշ գոյնի խնդիրներ, «Մշակի» բարեկամների ֆօնդը այդպիսին պէտք է լինէր։ Բարեկամներ և համախոհներ իրաւունք ունեն ֆօնդեր կազմել և դա շատ բնական է։

Բայց դեռ ֆօնդը չը կազմւած, մենք նկատեցինք, որ ֆօնդ կազմողները սկըսում են իրանց զգալ մի տեսակ տէրեր և սկսում են տալ խորհուրդներ, թէ չը պէտք է մերկացնել հասարակական այս կամ այն գործիչները, թէ չը պէտք է յարձակվել այս և այն դիրք ունեցող անձի վրա և այլն և այլն։

Մենք կտրական կերպով մերժեցինք ֆօնդ կազմելու ծրագիրը, որպէս զի հետագայ նշոյլ անգամ չը մնայ ոչ ոքի մտքում թէ «Մշակ» լրագիրը կարող է երբ և իցէ որ և է կողմնակի ազդեցութիւնների ենթարկվել և իր լեզուն ու գրիչը թեքել ու շեղել։

Գրական անկախութիւն, բարոյական հարազատութիւն—ահա ինչ տարիներ շարունակ պահպանել ենք և կը պահպանենք։

Միւս կողմից մենք ուշադրութեան ենք առել և այն հանգամանքը, որ արհեստական միջոցներով անկարելի է հաստատ և յարատև մի գործ կազմակերպել։ Արդարև ինչ կը լինի մամուլի մի օրգանի դրութիւնը, եթէ նա մի տարի լոյս տեսնէ ամէն շքեղութեամբ և փայլով և յետոյ ստիպւած լինի հեռանալ ասպարէզից կամ քարշ տալ մի խղճուկ և դժգոյն գոյութիւն։

Անհրաժեշտ է, որ հասարակութիւնը կարողանայ պահել, պահպանել թերթը և նրան դարձնել բնական երևոյթ։ Երբ որ հինգ տարի առաջ մենք «Մշակը» դարձրինք ամենօրեայ, մենք ստիպւած էինք շարունակ երեք տարի դէֆիցիտներ ունենալ, մինչև որ հասարակութեան մէջ լրագիր կարդալու պահանջը կարողացաւ այնքան ընդարձակվել, որ լրագիրը կարող եղաւ իր տարեկան ծախքերը հոգալ տարեկան եկամուտներով։

Ապահովելով «Մշակի» ամենօրեայ հրատարակութիւնը, մենք անցեալ տարի փորձեցինք լոյս ընծայել յաճախակի մէկուկէս թերթեր և գոհացում տալ գրական և հասարակական մի պահանջի, որ զգում էին թէ խմբագրութիւնը և թէ հասարակութեան այն մասը, որ ընտելացել էր լրագրական խօսքին։

Այս տարի մէկուկէս թերթ ունեցող համարների թիւը սկսեցինք բազմացնել, իսկ աշնանից սկսած իբրև կանոն ընդունեցինք հրատարակել «Մշակի» համարները մէկուկէս թերթով։

Այսօրվանից մենք տալիս ենք «Մշակը» այնպիսի գիրքով և ծաւալով, որ իր ամփոփով նա պէտք է պարունակէ երկպատիկ աւելի նիւթ քան առաջ և իր գիրքով հաւասարվի մայրաքաղաքի թերթերին։

«Մշակի» խմբագրութիւնը ընդարձակելով իր գործունէութիւնը, ոգևորված է ջերմ հաւատով, որ նա կարող կը լինի գործել հայ հասարակութեան համար այն լրջութեամբ, խորութեամբ, անձնուիրութեամբ և հարազատութեամբ, որ պահանջում են հայ ազգի, Անդրկովկասի և պետութեան լաւ ըմբռնւած շահերը։

Դէպի գործ ուրեմն։

ԳԱՂԱՓԱՐԻ ՀԱՄԱՐ

Կռւում ենք գաղափարի համար, մաքառում ենք կուլտուրական գոյութեան համար։

Կռւել և մաքառել կարող են անհատներ, կարող են և ամբողջ հասարակութիւններ և ազգութիւններ։

Հայերը ներկայումս կռւի և մաքառման մէջ են։ Պատմական հանգամանքները այնպէս են դասաւորվել, որ ամբողջ ազգին վիճակված է զոհեր և զրկանքներ տալ այն ձգտումների համար, որ նա ունի իբրև կուլտուրական մի ազգ։

Ցանդուգն թւացին այդ ձգտումները բոլոր շրջապատողների համար։

Ցանկանալ լինել ազատ մտածող, ազատ գործող, ազատ առաջադիմող մի ազգ—դա աններելի մի համարձակութիւն, դա նոյն իսկ մի յանցանք հրատարակվեց։

Դու ուզում ես ազատ կերպով դպրոցներ ունենալ, քո մայրենի լեզուն սովորեցնել քո զաւակներին, բարեգործական և կրթական հիմնարկութիւններ կազմակերպել, ազատօրէն ընտրել գործողներին և հասարակական պաշտօնեաներին, ազատ քննել և դատել քո կարիքների և պահանջների մասին, միութիւններ կազմել գործող մարդկանց և խմբերի մէջ—այդ բոլորի համար դու յանցաւոր ես, դու վնասակար ես, դու օրէնքից դուրս ես, դու հալածանքի արժանի ես, դու բանտերում և աքսորներում պէտք է օրեր մաշես, սպասելով մինչև որ մի օր ազատ կեանքի արեգակը կը ծագէ։

Եւ հայը վերջին տարիներում քամեց դառնութեան բաժակը։

Նա տանջվեց, հալածվեց և զոհվեց այն բոլոր բարիքների համար, որոնց ցանկանալը համարվում էր մինչև այժմ յանցանք վարչութեան, հասարակութեան, պետութեան դէմ։

Այժմ «յանցանքը» դադարել է յանցանք համարվելուց։ Այն բարիքները, որոնց ցանկանալը և ձեռք բերելը դատապարտելի էին հրատարակվել, այժմ հռչակվում են իբրև հասարակութեան և ազգի գոյութեան անհրաժեշտ պայմանները։

Մենք յաղթանակը տարանք։ Մենք ապագայի առաջ ոչ միայն արդարացանք, այլ և փառաւոր էջ գրաւեցինք ազգերի պատմութեան մէջ։

Սակայն մենք պէտք է երկրորդ կարևոր յաղթանակը տանենք։ Պէտք է իրականացնենք կուլտուրական գաղափարները մտաւոր կեանքի մէջ, բեղմնաւորենք ժողովրդական ստեղծագործութիւնը և դարձնենք երկիրը ժողովրդական երջանկութեան և հարստութեան մի մշտական աղբիւր։

Մենք պէտք է ապացուցենք, որ այն հիմնական բարիքները, որ ձեռք ենք բերել, իսկապէս փրկարար և ստեղծագործող հիմնասիւներ են կատարեալ առաջադիմութեան և բարգաւաճութեան համար։

Առողջ գաղափարի համար կռիւը և մաքառումը երբեք չեն կորչի ապագայի համար։ Թող ներկայ փաստերը ոգևորեն մեր նոր սերունդը անձնուէր և եռանդուն գործով շարունակելու գաղափարական կռիւը և մաքառումը կեանքի մէջ։

ԱԶԱՏ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԴԱՏԸ

Ռուսաստանում գիտութիւնը միշտ ոստիկանական խնամակալութեան երկաթէ ճիրաններում էր գտնվում։ Մատաղ սերունդը կրթութիւն պիտի ստանար ոչ այնպէս, ինչպէս գիտութիւնն էր պահանջում, այլ այնպէս, ինչպէս հնարաւոր և թոյլատրելի էին համարում չինօվնիկական բռնապետութեան իշխողները։ Դպրոցի վարչութիւնը ոստիկանական մի բաժանմունք էր։

Եղաւ, ճիշդ է, մի ժամանակ, 60-ական թւականներին, երբ հրատարակվեց համեմատաբար ազատամիտ համալսարանական կանոնադրութիւնը։ Բայց այդ մի հատիկ լուսաւոր վայրկեանը չարժէ իսկ յիշատակել, այնքան նա չնչին է այն միապաղաղ խաւարի մէջ, որ մի ամբողջ դար բռնացած էր ամբողջ պետութեան վրա։ Փայլուն բոցերին հետևեց մռայլ, երկարատև ռէակցիան, որի առանձին հոգատարութեան առարկան էր ամենաանողորմ կերպով ճնշել կրթութիւնը սկսած տարրական դպրոցից մինչև համալսարանը։ Մի շարք կատաղի խաւարապաշտներ, ինչպէս էին կոմս Տոլստոյ, Դէլիանով, Բօգոլէպով, «մեծ ինկվիզիտոր» Պոբեդոնոսցևի հետ միասին, դարձրին բոլոր կարգի և տեսակի դպրոցները մտաւոր սպանդանոցներ։ Մշակվեց ռուս պօլիտիկան՝—մանկավարժի զզւելի տիպը, որի հռչակւած ներկայացուցիչներից մէկն էր Կովկասի հոգաբարձու հրէշաւոր Յանովսկին։

Սակայն լոյսը չէ հպատակվում ոստիկանական հրամաններին։ Եւ սարկութեան, սարսափների այս տարիներում, երբ ամբողջ հասարակութիւնը, ըստ երևոյթին, բոլորովին ընդարմացել էր, մտաւորապէս ներքինիացել, ուսանող երիտասարդութիւնն էր միայն, որ կռիւ էր մղում յանուն ազատութեան, յանուն լաւագոյն ապագայի։ Որքան զոհեր է նա տուել բռնակալութեան Մողոքին։ Քանի քանի հարիւր ու հազար երիտասարդ թարմ կեանքեր են փտել բանտերի մէջ, աքսորավայրերում։ Անկարելի է այդ մարտիրոսագրութիւնը նոյն իսկ ընդհանուր գծերով պատկերացնել այստեղ…

Եւ այդ մենակ նահատակվող երիտասարդութիւնը դարձաւ նախակարապետ այն հուժկու շարժման, որ հետզհետէ զարգանալով, քաղաքական անողորմ մարտի դրօշակ բարձրացրեց։ Ուսանողութիւնը այդ շարժման առաջաւոր շարքերումն էր։ Նա շարունակ պահանջում էր գիտութեան ազատութիւն, բարձրագոյն դպրոցի ինքնավարութիւն։ Եւ վերջապէս ստացաւ այդ ցանկալի վիճակը։ Անցեալ տարի իշխան Միրսկու «գարնան» օրերում, բարձրագոյն դպրոցների դասատուները հաւաքվեցին, կազմակերպեցին միութիւն և ուսանողների հետ միասին պահանջեցին ակադեմիական ազատութիւն։ Բիւրոկրատիան դեռ իր եզան յամառութիւնն էր ցոյց տալիս։ Ընդհանուր գործադուլ հրատարակվեց. բոլոր բարձրագոյն դպրոցները փակվեցին։

Ներկայ տարւայ սեպտեմբերին ազատ գիտութիւնը խոշոր յաղթանակ տարաւ։ Դպրոցական բարձրագոյն հաստատութիւնները ստացան լայն ինքնավարութիւն, ոստիկանական կարգերը դուրս վռնդվեցին գիտութեան տաճարներից։ Ի՞նչ էր մնում անել։ Լայն բաց անել այդ տաճարների դռները, ազատ գիտութեան զինւորներ պատրաստել խաւարից ու բռնութիւնից այնքան երկար տանջւած երկրի համար։

Այդպէս էլ հասկացաւ պրոֆէսօրական դասակարգը, որի ձեռքն էր անցել բարձրագոյն դպրոցների վարչութիւնը։ Ազատ համալսարան, ազատ գիտութեան համար—այս էր նշանաբանը։ Բայց ինքնավար համալսարանից դուրս կռւում էր ազատական շարժումը։ Փողոցներում պատրաստւում էր յեղափոխութիւն։ Կարող էր համալսարանը կղզիացած մնալ այդ շարժման մէջ, երբ ազատութեան որոնող ժողովուրդը հաւաքվելու, խօսելու տեղ չունէր, երբ քաղաքական միտինգները արգելւած էին։ Եւ ահա ազատաբար տարրերը թափվում են համալսարանները, միտինգներ կազմում։ Ուսանողութիւնը նրանց հետ է։ Համալսարանական վարչութիւնները, միշտ հաւատարիմ մնալով այն սկզբունքին, թէ համալսարանը չը պիտի դառնայ քաղաքական ագիտացիայի տեղ, թէ նա միայն գիտութեան պիտի ծառայէ, պահանջում են կառավարութիւնից, որ հասարակութեան ազատութիւն տրվի հաւաքվելու և խօսելու, որպէս զի համալսարանները միայն ուսանողութեան պահանջներին [illegible] ազատվեն օտար տարրերի հեղեղումից։

Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը այդ ազատութիւնն էլ տուեց։ Բայց այսօր, օրինակ, Մոսկվայի համալսարանը, պրոֆեսորների համարեա միաձայն վճռով, փակւած է։ Մի ժամանակ ոստիկանութիւնն էր փակում համալսարանները, իսկ այսօր—պրոֆէսօրական կազմը։ Ինչու՞։ Որովհետև ազատ գիտութեան պահանջները ճնշւած են և համալսարանը դարձել է քաղաքական կուսակցութիւնների մրցութեան, բռնութիւնների ասպարէզ և եթէ շարունակէ ընթանալ այդ ուղղութեամբ, պիտի վտանգի ենթարկէ իր գոյութիւնը։

Այս է ասում պրոֆէսօրների խորհրդի յայտարարութիւնը։ Համալսարանի կոչումն է ծառայել ազատութեան, մատակարարելով իր սաներին ազատ գիտութեան բոլոր բարիքները։ Համալսարանը չէ զրկում ուսանողներին ազատ, իրաւատէր քաղաքացու կոչումից. բայց քաղաքական մրցակցութիւնների բեմը համալսարանից դուրս պիտի գտնվի. իսկ համալսարանի պատերի մէջ գիտութիւնը, միայն գիտութիւնը պիտի թագաւորէ։

Սկզբունքով, ի հարկէ, միանգամայն արդարացի են այս տեսութիւնները։ Բայց չը պէտք է մոռանալ, որ ժամանակը, հանգամանքները անհամեմատ աւելի ուժեղ են, քան սկզբունքի խնդիրները։ Ներկայումս ամբողջ երկիրը կռւում է սահմանադրական երաշխաւորւած ազատութիւնների համար։ Այդ կռւի մէջ երկիրը անհոգի, անհաշիւ զոհաբերութիւններ է անում։ Ոչինչ զարմանալի, տարօրինակ հանգամանք չէ և այն, որ զոհվում են և ազատ գիտութեան պահանջները։ Այդ զոհաբերութիւնը, ուրիշների հետ միասին, այն է միայն ցոյց տալիս, որ պէտք է փութացնել երաշխաւորող ազատութիւնների իրագործումը կեանքի մէջ։

Ազատ գիտութեան դատը երկրի արմատական ազատութեան դատն է։ Մէկը միւսի համար մոռանալ չէ կարելի։ Ուստի մենք չենք հաւատում թէ պրոֆէսօրներին կաջողվի առանձնացնել, կղզիացնել գիտութիւնը, երբ փողոցներում դեռ շարունակվում է քաղաքական ուժեղ, ցնցող պայքարը։

Համալսարանները փակելը դեռ այդ մեծ պայքարի առաջացրած ծանր ընդհարումները վերջացնել չէ նշանակում։ Ուսանողութիւնը չէ կարող մի ուրիշ բան դառնալ, բայց առաջաւոր, մարտնչող երիտասարդութիւնից։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շաբաթ օր, նոյեմբերի 12-ին, Ղազախի գաւառից 50 հոգուց բաղկացած մի յատուկ պատգամաւորութիւն, բաղկացած թուրք, հայ և ռուս գիւղականներից, վաճառականներից և ինտելիգենտ անձերից ներկայացաւ կովկասեան փոխարքայ կոմս Վօրօնցով-Դաշկովին զեկուցանելու իրանց գաւառի կարիքների մասին, խնդրելու, որ գաւառապետ Արնօլդը մնայ իր պաշտօնում։

Պատգամաւորութեան անդամները յայտնեցին, որ Ղազախի գաւառը տարիներ շարունակ եղել է աւազակութեան և ասպատակութեան մի սարսափելի բոյն։ Միայն վերջին տարիներս, երբ գաւառապետի պաշտօն ստանձնել է Արնօլդը, Ղազախի գաւառը հանդարտվեց և ներկայումս վայելում է խաղաղութեան և հանգստութեան արդիւնքները։ Մինչդեռ առաջ Ղազախի գաւառը համարվում էր ամենից անհանգիստը, այժմ ընդհակառակը նա պահեց իրան ամենախաղաղ կերպով։ Եւ մանաւանդ, այս տարի, երբ Գանձակի նահանգի շատ մասերը վարակված էին հայ-թուրքական ընդհարումների սարսափելի իրարանցումներով, Ղազախը մնաց բոլորովին ազատ այդ ընդհարումներից։

Պատգամաւորների բոլորի խօսքը ունէր մի և նոյն բովանդակութիւնը։ Բոլորը երկիւղ էին յայտնում, որ եթէ Արնօլդին հեռացնեն Ղազախից, կարող են տեղի ունենալ դժբաղդութիւններ այդ գաւառում։

Փոխարքան, լսելով պատգամաւորութեան բոլոր պատճառաբանութիւնները, խոստացաւ Արնօլդին թողնել առաջվայ պէս իր պաշտօնի մէջ, իբրև Ղազախի գաւառապետ։

—

Մենք ստացել էինք տեղեկութիւններ Մեղրու շրջանի մասին և յայտնել էինք, որ այնտեղ դեռ չեն նկատվում վտանգաւոր յուզմունքներ։ Այժմ մեզ տեղեկացնում են, որ վերջին ժամանակներս Մեղրու շրջակայքում դրութիւնը դարձել է խառն, կռիւները լարվում են և կարող է տեղի ունենալ բռնկում։

—

Բաքու, 11 նոյեմբերի,

Քաղաքը ըստ երևոյթին հանգիստ է, բայց թէ ծայրերին ինչեր են կատարվում, այդ ոչ ոքին յայտնի չէ. Պերսիդսկայա փողոցում՝ № 50 Թուրք բաղնիսի մօտ, երեք զինւած թուրք յարձակւում են Թիֆլիսեցի բանկում ծառայող հայ հաշւապահի վրա, իր կնոջ հետ, սպանելու դիտաւորութեամբ. բարեբախտաբար այդ կողմից «անցնում է» մի թուրք ուսուցիչ, որը և միջամտում է—ինչ ուզում էք արէք միայն թէ մի սպանէք… —և նրանք էլ անում են. առնում են հայու ձեռքից ատրճանակը, փողը և ուրիշ բան, և բաց թողնում… և այդ բոլորը օրը ցերեկով, ժամի 4-ին, ընթերցող, թուրք ուսուցչի, փողէ և պատրուլների ներկայութեամբ։ Երևակայեցէք, ինչ կը լինի կնոջ դրութիւնը. երբ ես մարդուն պատահեցի ապուշ կտրած, մի սարսափելի դրութեան մէջ. խեղճ մարդ, նա հրաժարւում էր ով և է մէկին դիմելուց, պատճառաբանելով որ ոչ ոքի այլ ևս չէ հաւատում…

Ա. Ջանեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Կովկասեան հայերի աղէտը անհուն վիշտ է պատճառել արևմտեան հայութեան։ Ուրիշ կերպ, ի հարկէ, չէր կարող լինել։ Անկախ այն հանգամանքից, որ հայութեան մի մասի կսկիծը չէ կարող ընդհանրութեան կսկիծ չը դառնալ զուտ արիւնակցական, ցեղային համերաշխութեան հզօր, անջնջելի կապերի պատճառով, կայ և մի նշանաւոր իրողութիւն։ Դա այն դերն է, որ կատարել է և պիտի կատարէ Կովկասի հայութիւնը ամբողջ ցեղի, ամբողջ հայութեան վերաբերմամբ։ Այդ դերը բացատրող մի գեղեցիկ առաջնորդող ենք կարդում Բուլղարիայի «Ռազմիկ» թերթի մէջ։ Ահա ինչ է ասում յօդւածագիր պ. Ռ. Զարդարեան.

«Ինչ որ Թրքահայը կը զգայ այս պահուն՝ իր ռուսահայ եղբայրներուն սարսափին, արիւնին ու արցունքին առջև՝ ազգակցի, Հայու սովորական ու բնական կսկիծը չէ լոկ, այլ շատ աւելի հոգեբոյս, շատ աւելի խոր ու յորդ վշտակցութիւն մը, անհնարին սուգն է կրտսերին՝ իր երէց եղբօրը հիւանդ անկողնին քով։

Կովկասահայը դեռ շատ կանուխ, մեր մտաւորական զարթնումին գլխաւոր ղեկին ու բարոյական, նիւթական քաջալերն եղաւ։ Միացեալ ընկերութեան հազարաւոր րուբլիները ինք տուաւ, Հայաստանի սովին ատեն ինք խրկեց մեր հացը, Սանասարեան վարժարանը իրմով բացուեցաւ Կարնոյ մէջ, ինք ճամբեց մեզի Տիկին Մատաթեանը՝ որ մանկավարժական սկզբունքները ընդհանրացնողն եղաւ Պոլիս ու գաւառները, Րաֆֆին ու Բամառ-Քաթիպեան էին որ Թրքահայ երիտասարդութեան աչքերուն առջև նշուլեցին ազատութեան առաջին առաւօտը, վերջապէս մեր մտաւոր ու բարոյական աստիճանական վերածնութեան բոլոր այլազան ու բազմաձև շարժումներուն մէջ ռուսահային եղբայրական բարերար ձեռքը երևցաւ միշտ։ Հասան կռուի ու արիւնի օրերը. նոյն ձեռքին հետ ահա կուրծքն ալ, որ շիտակ կանգնեցաւ թշնամիին սուրին ու գնդակին առջև։ Մեզի հետ կուշտ կուշտի պայքարեցաւ, մեզի հետ վիրաւորուեցաւ ու մեզի հետ մեռաւ կախաղանի վրա՝ երբ մեռնիլ հարկ էր։

Մեր, Թրքահայերուս, վիշտն ու տրտմութիւնը կրկնապէս դառն է, անոր համար որ կովկասեան այս արիւնահեղութիւններուն վրա երբ կը ծանրե՞նք՝ մեր իսկ ճակատագրին սևութիւնը կը տեսնենք հոն նորէն»։

Այնուհետև յօդւածագիրը բացատրում է Կովկասի Թաթարական արշաւանքը այն քաղաքականութեան տեսակէտից, որի վարպետը Աբդուլ-Համիդն է, իսկ աշակերտները Գոլիցին և Պլևէ։

«Սուլթանը՝ համիսլամական գաղափարի պատրուակին տակ՝ բաղդատաբար աւելի բարգաւաճ ռուսահայը հարուածելով, զայն անտեսական տագնապի, անհանգստութեան, թշուառութեան ենթարկելով, ռուսահային շուրջը կարմիր արհաւիրք ցանելով՝ կուզէ ստիպել զայն, որ իր տանը հրդեհը մարելու զբաղի, միայ ծուխի մէջ և մոռնայ Թրքահայուն ազատագրական գործը։ Խանձողը՝ որ Սուլթանը հեռուէն կերկնցնէ Կովկասի ու կրակ կուտայ անոր՝ միայն մեր եղբայրներուն տունն ու տեղը չէ որ կը վառէ, այլ ամէնէն աւելի մերը, Թրքահայերունը։

Աւելին կայ. գիւղային քաղաքագիտութեան ծրագիր մը չէ գործադրուածը լոկ, այլ վրէժխնդրութեան հաշուեյարդարութիւն մըն ալ։

Այս սարսափի, անէծքի, վիշտի ու դժոխքի սերմնացանը՝ հարկաւ իր ժամանակին եղած էր, միայն հունձքն է որ հիմա մենք կը քաղենք. այդ հունձքը հասունցուցին՝ ռուսո-ճապոնական պատերազմը և անոր աննպաստ արդիւնքը ռուսական զէնքին համար։

Իսկ սերմնացանը կանուխ տեղի ունեցած, աւարտած էր. Պլեւէ, Գոլիցին և իրենց արբանեակները քշեր էին արօրը, անոնք էին որ հաւատացուցեր էին բարձրագոյն ռուս շրջանակներու մէջ, թէ՝ Կովկասահայը անջատողական, ինքնիշխանութեան ձգտումներ ունի. դէմքերը խոժոռեր էին, յօնքերը պռստեր և ահա մութին մէջ կարմիր մատեաններ գծած էին բռնաբարութեան, ճնշումի և հալածանքի նախագծերը։ Նոյն պահուն՝ սուլթանական գաղտնի գործակալները, շէյխերը, խալիֆայական հրահանգները՝ բուռ-բուռ կը նետէին Թաթարական ամբոխին մէջ ատելութեան, վրէժխնդրութեան ու համիսլամութեան սերմեր, օգտուելով մշակուած պատրաստ հողէն։

Անկասկած, առանց Գոլիցինեան յիմար քաղաքականութեանը՝ Սուլթանը որքան ալ հետամուտ էր ռուսահայը զարնելու իր նպատակին մէջ, աւելի պիտի դժուարէր իրեն, որովհետև ոչ միայն հայերու դիմադրութիւնն էր որ պիտի գտնէր այն ատեն իր դէմ, այլ ամբողջ ռուս կառավարութեան զինուորական ու վարչական ուժը։

Ու հիմա կը տեսնենք թէ՝ Թաթարական վայրագութիւնները հաւասարապէս սպառնական են թէ ռուսահային և թէ Թրքահային. երկսայրի սուր մըն է որ հայութեան երկու կարևոր մասերը կը խոցէ մէկ հարուածով։

Պէտք է լրջօրէն նկատողութեան առնել խնդիրը և ծագելիք հետևանքները։

Հարցը այնքան բարդ, այնքան թնճկւած է, որ միմիայն դիմադրութեան և նիւթապէս ինքնապաշտպանութեան ջանքերը բաւական չեն՝ աղետաբեր, լեռան պէս վտանգին առջևը առնելու։

Բոլոր հետևանքները նախատեսող և անոնց դարմանն ու միջոցները ընդգրկող լայն ծրագիր մը, ապաքէն մը պէտք է, որուն գործադրութեանը աշխատինք ամէնքս, ռուսահայ թէ Թրքահայ, մարտնչող զինուոր թէ մտաւորական, դրամատէր թէ գիւղացի։

Ահա անհրաժեշտը և անմիջականը»։

Մենք ինքներս էլ այդպէս ենք հասկացել Կովկասի հայութիւնը արեան մէջ խեղդելու ջանքերի իսկական պատճառներից ամենագլխաւորը։

⁂

„Возрожденіе“ թերթի մէջ մի թղթակից նկարագրում է մի քանի չինօվնիկների կատարած բարբարոսութիւնները Վրաստանում։ Այդ չինօվնիկներից աչքի է ընկնում, ի միջի այլոց, և Օզուրգէթի գաւառապետ Գեղամովը։ Ով վատ է ու անբարեխիղճ, թող դատապարտւի հասարակութեան առաջ։ Մենք միայն ուրախ կարող ենք լինել։ Հարցը այդ չէ, այլ այն, որ լրագրի թղթակիցը, յիշելով պ. Գեղամովի անունը, պարտք է համարել փակագծերի մէջ յիշել թէ նա ծագումով հայ է։ Ի՞նչ միտք ունի այս ցուցմունքը։ Ի՞նչու է յիշատակւած չինօվնիկի ծագումը։ Մենք չենք ուզում այս հարցերի առթիվ որ և է գուշակութիւն անել, բայց պարտք ենք համարում ասել պրոգրեսիվ ռուս թերթին, թղթակցին որ նրա արածը մի վերին աստիճանի անտակտ վարմունք է և յիշեցնում է Սուվորինի, Գրինգմուտների սիրած-փայփայած մեթոդը։ Չինօվնիկը չինօվնիկ է, անկախ ազգութիւնից, ծագումից, ոճրագործը ոճրագործ է ամէն տեղ, ամէն ազգի մէջ։ Ներկայ արիւնոտ տարւայ ընթացքում մամուլը համարեա ամէն օր յիշատակում էր չարահռչակ հերոսների անունները, բայց երբեք չէր թոյլ տալիս իրան ասելու թէ դրանցից որն ինչ ազգից է։ Նակաշիձէ, Ամիլախորի, Ժգենտի, Տակայշվիլի և հարիւրաւոր նմաններ ամէն օր հանդէս էին գալիս իրանց «գործունէութեամբ», բայց ով է երբ և իցէ թոյլ տուել ասելու թէ դրանք վրացիներ են։ Անմտութիւն կը լինէր այդ յիշատակութիւնը, քանի որ վրաց ազգը ոչինչ մեղք չունի այդպիսի հերոսներ ունենալու համար, ինչպէս հայ ազգը չունի մի Գեղամով իր անդամների մէջ ունենալու համար։ Մի՞թէ այս բանը դեռ նոր պիտի հասկանայ արմատական «Возрожденіе»-ն։—Չենք հաւատում…

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

XIV

Մեր բոլոր նախորդ յօդւածների նպատակն այն էր, որ ապացուցանենք կազմակերպւելու, քաղաքական մի որոշ կազմակերպութիւն ստեղծելու կարևորութիւնը։ Այդ անհրաժեշտ է, որպէս զի մենք ևս կարողանանք նախ՝ իբրև քաղաքացիներ աջակցել այն մեծ գործի իրականացման, որին ձեռնարկել են Ռուսաստանի ամբողջ պրոգրէսիստ, առողջամիտ և աշխատամիտ խաւերը, այն է սահմանադրական անխախտելի սկզբունքները պարտաւորապէս մտցնելու ամբողջ Ռուսաստանի մէջ. երկրորդ իբրև կովկասցիներ՝ հիմնվելով նոյն սահմանադրական սկզբունքների վրա, մտցնել Կովկասում լայն ինքնավարութիւն և նրա տնտեսական, վարչական, կուլտուրական զարգացումը դնել հաստատ հողի վրա. երրորդ՝ իբրև հայեր, ինքնուրոյնաբար, անկախօրէն առաջ տանել ազգային կուլտուրական, հոգևոր-բարոյական բարգաւաճումը, համաձայն հայ ազգի կենսական պահանջների և իղձերի, բղխած նրա բազմադարեան պատմութիւնից և անցեալից։

Ինձ համար, ինչպէս և ամէն մի հայի համար, որ մտել է քաղաքացիական նոր կեանքի մէջ այս տարւայ հոկտ. 17-ից ի վեր, անհրաժեշտ է որոշել իմ յարաբերութիւնը դէպի ընդհանուր հայրենիք Ռուսաստանը, իբրև ազատ քաղաքացի, իմ յարաբերութիւնը՝ դէպի իմ բնակած երկիր Կովկասը, իբրև կովկասեցի, իմ յարաբերութիւնը՝ դէպի իմ սեփական ազգը, դէպի հայութիւնը, դէպի իմ մայրենի երկիրը, իբրև հայ։

Այդ պարտաւորութիւնները կատարելու և նրանց հետ անբաժան իրաւունքները վայելելու համար պէտք է ես ընտրեմ այնպիսի մի ծրագիր, կամ պէտք է յարեմ այնպիսի մի քաղաքական կուսակցութեան, որի ծրագիրը կարողանայ լիուլի բաւարարութիւն տալ իմ պահանջներին, իբրև քաղաքացու, իբրև կովկասցու և իբրև հայի, մի և նոյն ժամանակ գործնական և ոչ թէօրիական նշանակութիւն ունենայ, այսինքն որ նա լինի այսօրւայ և ոչ վաղւայ ծրագիր, որ նա գրաւէ ընդհանրութեան համակրութիւնը և աջակցութիւնը, իբրև գործնական և իրագործելի ծրագիր։

Ներկայումս մեզ ջրի և օդի նման անհրաժեշտ է, որ Ռուսաստանում հաստատւի կարգ, իրաւական կացութիւն, խաղաղութիւն և անդորրութիւն, արդարադատութիւն, շիտակ, անխարդախ, անկաշառ վարչութիւն, ընդհանուր, պարտադիր, ձրի ուսում, անձի անձեռնմխելիութիւն, խօսքի, մամուլի և ընկերութիւնների ազատութիւն. Ջրի և օդի նման անհրաժեշտ է, որ մեր երկրում՝ Կովկասում տիրող անիշխանութեան վերջ տրւի, հայ-թրքական արիւնահեղ և եղբայրասպան ընդհարումները այլ ևս չը կարողանան կրկնւել, այդ ընդհարումները սարքող, կազմակերալող և ղեկավարող անձինք արժանաւոր պատիժը կրեն և Կովկասը մտնի ազատ, խաղաղ կուլտուրական շաւղի մէջ ու նրա բնակիչների ոյժերը կարողանան անդորր սրտով և հոգով անձնատուր լինել ստեղծագործող, արդիւնաւէտ աշխատութեան:

Եւ ահա այն ծրագիրը, որ առաջարկում է դեմօկրատական-սահմանադրական կուսակցութիւնը, հէնց այդ նպատակին էլ ձգտում է և կարող է գոհացում տալ մեր այդ կենսական պահանջներին:

Այդ ծրագիրը, շատ քիչ տարբերութեամբ, գոհացումն է տալիս և այն պահանջներին ու իղձերին, որ արտայայտեց այս տարի ապրիլին Թիֆլիսում գումարված հայկական համագումարը: Վերջապէս այդ ծրագիրը, ինչպէս պարզ կարելի է տեսնել բոլոր նշաններից, դառնալու է Ռուսաստանի բոլոր պրոգրեսիստ և լեգալ գործունէութեան ու կեանքի ծարաւ ունեցող խաւերի ծրագիրը:

Պէտք է ուրեմն մօտիկից ծանօթանալ այդ ծրագրի հետ:

Բայց առաջ մի քանի խօսք ասենք և այն մասին, թէ բացի դեմօկրատական-սահմանադրական կուսակցութիւնից, ուրիշ ինչ կուսակցութիւններ կան և ստեղծվել են Ռուսաստանում, ինչ ծրագիր ունեն նրանք, որպէս զի ընթերցողը կարողանայ ամբողջ գիտակցութեամբ վերաբերվել և կշռել ու որոշել թէ որն է այսօրվայ ծրագիրը, որն է վաղվայ ծրագիրը, ո՞րն է իրագործելին, ո՞րն անիրագործելին:

Ռուսաստանում և մեր երկրում, յեղափոխական գործունէութեան առաջ եկած ազատարար շարժման հզօր ալիքները, համակելով ժողովրդի բոլոր խաւերին, առաջ բերեցին երեք գլխաւոր քաղաքական կուսակցութիւններ և ծրագիրներ, հիմնված լայն դեմօկրատական սկզբունքների վրա: Դրանք են. 1) «սօցիալիստ-յեղափոխականների», 2) «սօցիալ-դեմօկրատների» և 3) «դեմօկրատական-սահմանադրականների» ծրագիրները: Վերջերս կազմվեց և իրաւական կարգի կուսակցութիւն (партія правового порядка), սակայն որովհետև այդ կուսակցութիւնը առ այժմ ոչ մի նշանակութիւն և ազդեցութիւն ձեռք չէ բերել, ուստի մենք կանգ կառնենք առաջին երեք կուսակցութիւնների ծրագրի վրա: Գալով Կովկասին, պէտք է անցողակի յիշենք—ապագայում աւելի մանրամասն խօսելու համար, որ բացի այդ ընդհանուր կուսակցութիւններից (սօցիալիստ-յեղափոխականների և սօցիալ-դեմօկրատների) այստեղ կազմվել են և երկու այլ կուսակցութիւններ կամ առանձին ֆրակցիաներ—«աւտօնօմիստների» և «ֆեդերալիստների», այսինքն ինքնօրինութիւն և դաշնակցութիւն պահանջողներ: Օրինակ, ընդունելով, որ Կովկասում տիրող տարրերը երեք են—վրացի, հայ և թուրք—այդ կովկասեան կուսակցութիւնները պահանջում են, որ Վրաստանին, հայաբնակ նահանգներին և թուրքաբնակ նահանգներին տրվի ինքնօրինութիւն (աւտօնօմիա) և ոչ ինքնավարութիւն (самоуправленіе) և ապա այդ երեք աւտօնոմ երկիրները—վրաց, հայկական և թրքական—ֆեդերացիայի կամ դաշնակցութեան կապով շաղկապվեն Կովկասի հետ, իսկ Կովկասը՝ Ռուսաստանի հետ:

Աւտօնօմիայի և ֆեդերալիզմի հարցերը առանձին կը քննենք, մանաւանդ, որ այդ հարցերը դրված են նաև Լեհաստանի, Լիտվայի և Ռուսաստանի ծայրային երկրների մասին:

Այժմ անցնենք սօցիալիստ-յեղափոխականների և սօցիալ-դեմօկրատների ծրագիրների քննութեան: Իբրև սօցիալիստական կուսակցութիւններ այդ երկուսը ընդհանուր կէտերով շօշափվում են, տարբերվելով միջոցների գործադրութեան և մի քանի ոչ էական հարցերի մէջ: Հիմնական կէտը երկու ծրագիրների այն է, որ նրանք պահանջում են արդիւնաբերութեան բոլոր միջոցների եւ գործիքների ընդհանրականացումը, հասարակացումը և հողի ազգայնացումը (націонализація) կամ սօցիալիզացիան: Միայն տարբերութիւնը միջոցների մէջ է. սօցիալիստ-յեղափոխականները ձգտում են հասնել այդ նպատակին յեղափոխական միջոցներով, իսկ սօցիալ-դեմօկրատները՝ սօցիալիզացիայի միջոցով. այսինքն այնպէս գործելով, որ հողերը հետզհետէ ընկնեն պրօլետարիատի ձեռքը և նրա ընդհանուր սեփականութիւն դառնան: Բացի դրանից երկու կուսակցութիւններն էլ պահանջում են ոչ թէ միապետական սահմանադրութիւն, այլ դեմօկրատական-հանրապետութիւն:

Յաջորդ անգամ աւելի մանրամասն կը քննենք սօցիալ-դեմօկրատների ծրագիրը:

Շահրիար

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

I

Կենդրօնացում եւ Ֆեդերալիզմ

Մամուլի ազատութիւն է,—բայց Պետերբուրգում հրատարակվող «Новая Жизнь» լրագիրը ոստիկանութիւնը խլում է քաղաքացիների ձեռքից: Ասում են, որ այդ մասին նոյն իսկ գաղտնի շրջաբերական կայ:

Բարձրագոյն մանիֆեստով հրատարակված է անձի անձեռնմխելիութիւն, բայց նոյն լրագրի խմբագրութիւնը շրջապատել, խուզարկել և մօտ 40 հոգի ձերբակալել են:

Սահմանադրական հիմքեր ու սկզբունքներ է շնորհվել Գահի բարձունքից,—իսկ խուլիգանները կոտորում են հրէաներին, «պատրիօտները» կոտորում են ազնիւ ու ազատամիտ քաղաքացիներին:

Այդ բոլորը հին րեժիմի մեղքն է:

Ո՞րքան դժբախտութիւն, ո՞րքան արիւն-արցունք է պատճառել բիւրոկրատական կենդրօնացած րեժիմը: Ո՞րքան նա յետ է պահել Ռուսաստանի առաջադիմութիւնը, նրա կուլտուրական զարգացումը:

Այսօր էլ, երբ Բարձրագոյն Մանիֆեստը հրատարակելով արդէն տուել է 4 ազատութիւնները,—դեռ արիւնը հոսում է, դեռ շղթաների շառաչը հնչում է Շլիսելբուրգի ու Պետրոպաւլովսկի բանտերից... Դեռ այլակրօն և այլացեղ ժողովուրդները դիտվում են իբր «հպատակ», և ոչ իբր հաւասար իրաւունքների տէր քաղաքացի:

Եւ այդ բոլորի արմատը, դրանց մայրը կառավարութեան միահեծան ու կենդրօնական ձևն է:

—

Կենդրօնացած վարչական մարմնի գագաթից հրամայվում է այսուհետև ճանաչել 4 ազատութիւնները, կեանքի մէջ մտցնել նրանց, ստեղծել եւրոպական մօտով մի իրաւակարգ:

Բայց ո՞վ պէտք է մտցնէ այդ բանը, ո՞վ պէտք է իրականացնէ:—Պաշտօնեաները, բիւրոկրատիան, չինովնիկութիւնը:

Կառավարութեան ձևը մեզանում կենդրօնացում է եղել, ցենտրալիզմ: Հրամայել են վերևից և հսկայական կայսրութեան մի ծայրից միւսը բիւրոկրատիան, մեքենայի ճշտութեամբ, գործադրել է այդ հրամանները:

Բիւրոկրատիան մի անսասան բոյս է, որ աճում է ամեն հողի վրա, կլիմայական բոլոր պայմաններում, թէ ջրի և թէ ցամաքի մէջ:

Տասնութերորդ դարի Ֆրանսիայում հին րեժիմի ժամանակ բիւրոկրատիան ամենազօր էր: Եկաւ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը. Լուդովիկոսների ձեռին հլու գործիք բիւրոկրատիան դարձաւ նոյնպիսի հաւատարիմ գործիք Դանտոնի, Մարատի, Ռոբէսպիէրի, Բիլլօ-Վարէնի և Ֆուքէ-Տէնվիլի ձեռքին: Անցաւ զարհուրելի տէրրօրի շրջանը, եկաւ Նապոլէօնը. բիւրոկրատիան նոյն հաւատարմութեամբ շարունակեց ծառայել կայսրին: Վրա հասան Բուրբոնները, Յուլիսեան միապետութիւնը, II հանրապետութիւնը, Նապոլէօն III-ի կայսրութիւնը—և բիւրոկրատիան նոյն հլու հնազանդութեամբ ծառայեց ամենքին: Այսօր էլ նա ծառայում է III հանրապետութեանը:

Բայց մի աստիճանից միւսին անցնելիս, բիւրոկրատիան ցնցումներ, ջղաձգութիւններ է անում: Հին-րեժիմից յեղափոխութեան անցնելիս, նա հսկայական դիմադրութիւն ցոյց տուեց, բայց յետոյ քանի գնաց աւելի զիջող դարձաւ, աւելի դիւրութեամբ սկսեց գործիք դառնալ:

Ռուսաստանում կենդրօնացումն արտայայտվել է նրանով, որ մի ահեղ բիւրոկրատիա, վամպիրի նման թաղել է իր ճիրանները ժողովրդի սիրտը՝ Պետերբուրգից սկսած մինչև կայսրութեան ամենախուլ անկիւնները:

Հազար տարի է նա կեանք ունի, հազար տարի է նա թաղված է ժողովրդների մսի ու արեան մէջ և ծծում, ծծում է նրան:

Այժմ նրան, այդ հսկայ պոլիպին պոկում են այդ մարմնից...

Եւ արիւնը ժայթքում է շատրուանի նման:

—

Բիւրոկրատիա և կենդրօնացում, կենդրօնացում և բիւրոկրատիա—դրանց իրարից բաժանել համարեա անկարելի է: Երբ երկրի րեժիմը կը լինի ցենտրալիզմ, երբ գոյութիւն կունենայ հրամայող, որոշող մի կենտրոն և երբ այդ որոշումները գործադրութիւն պէտք է գտնեն ոչ թէ մի փոքրիկ վայրում,—մի գաւառում կամ մի նահանգում,—այլ մի ամբողջ կայսրութեան մէջ, այդ դէպքում անպատճառ պէտք է գոյութիւն ունենայ մի բիւրոկրատիա: Ինքնակալական է քո երկիրը, թէ հանրապետական—դա այնքան էլ նշանակութիւն չունի բիւրոկրատիզմի տեսակէտից:

Բիւրոկրատիան իշխում է ինքնակալ Ռուսաստանում, հանրապետական Ֆրանսիայում:

Բիւրոկրատիան չարիք է մի երկրի համար, խարազան է ժողովրդի համար, նա աւելի զարհուրելի է, քան Եհովայի ուղարկած 7 փորձանքները եգիպտացիների գլխին: Նրանից պէտք է փախչել իբր ժանտախտից,

Բայց, ինչպէս ասացինք, նրա մայրը կենտրօնացումն է, կառավարութեան ցենտրալիստ ձևը: Ուրեմն պէտք է խուսափել ցենտրալիզմից էլ: Դա տրամաբանական մի պարզ հետևողութիւն է:

—

Ռուսաստանը գտնվում է երկունքի մէջ:

Ի՞նչ է արդեօք լինելու նրա ծնունդը. Ազատութիւն, սահմանադրութիւն, կենտրոնացում, թէ ապակենտրոնացում:

Խմորումը, յեղափոխական յուզումը շարունակվում է երկու կողմից էլ—թէ բիւրոկրատիայի, մօնարխիստների, «հայրենասէրների» կողմից և թէ յեղափոխական բոլոր կուսակցութիւնների կողմից: Եզրակացութիւն հանել թէ վաղն անպատճառ այս կամ այն հոսանքը, այս կամ այն բանակը կը յաղթէ,—վաղաժամ կը լինի և շտապողական:

Բայց որ՞ն էլ որ յաղթէ, մի բան կարելի է այժմից նախատեսել դրականապէս: Այդ այն է, որ՝ եթէ յաղթող հոսանքը եղաւ ցենտրալիստ, կենտրոնացման կողմնակից՝ Ռուսաստանն ունենալու է մի նոր բիւրոկրատիա:

Վզնոցը մնալու է, միայն կաշէ վզնոցի փոխարէն թերևս դրվի պղնձէ կամ, ասենք, ոսկէ վզնոց:

Կենտրոնացման պաշտպան է ռէակցիան, բայց նրա կողմն է նաև «ծայրայեղ» տիտղոսը կրող մի կուսակցութիւն—սօցիալ դէմօկրատիան:

Բանւորական այդ ուժեղ կուսակցութիւնը ցենտրալիզմ է պահանջում: Նա ցանկանում է կառավարական մի ձև, որը ունենայ մի ընդհանուր կենտրոն, որը որոշումներ կայացնէ ամբողջութեան համար և ամբողջութիւնը ենթարկվի այդ որոշումներին:

Իբր ապացոյց՝ ահա առաջ եմ բերում „Новая Жизнь“ սօցիալ-դէմօկրատական օրգանի № 4-ի առաջնորդողը, որ «Մշակ»-ի անցեալ համարի մամուլի բաժնում թարգմանված էր:

«Պրօլէտարիատի կռիւը ղեկավարող սօցիալ-դէմօկրատիան, ասում է Մինսկու օրգանը, իր սկզբունքներով կենտրոնացման կամ ցենտրալիզմի կողմնակից է եւ ֆեդերալիզմի հակառակ: Կազմել սակաւաթիւ խոշոր պետութիւններ բազմաթիւ մանր պետութիւնների փոխարէն, որոնք իրարից անջատված են քաղաքական եւ մաքսային արգելքներով,—դա նպաստում է կապիտալի այն միախմբմանը, որ միացնում և համայնականացնում է արդիւնաբերութիւնը (արտադրութիւնը) և պատրաստում է սօցիալիզմի յաղթանակը. դա նպաստել է նոյնպէս կազմակերպված պրօլէտարիատի հզօր ու լայնածաւալ բանակներ կազմելուն, փոխանակ այն մանր առանձնացած զօրաբաժինների, որոնք կարող են միայն պարտիզանական կռիւ մղել կապիտալիզմի և բռնապետութեան դէմ: Ռուսաստանի յետադիմական քաղաքականութիւն կը լինէր ձգտել վերանորոգելու հին, բաժան-բաժան և մասամբ արդէն ջնջված ազգային սահմանները:»

Ահա մի բացայայտ կարծիք, առանց ստամնումների, պարզ ու որոշ:—Սօցիալ-Դեմօկրատիան կենտրոնացում է ուզում և դէմ է ֆեդերալիզմին:

Անցնենք այդ հարցին:

Խաժակ

ԿՈՐԶԻ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆԸ

—

Մի շատ հետաքրքրական և բնորոշ երևոյթ տեղի ունեցաւ Պետերբուրգում:

Այնտեղ գոյութիւն ունի «Մամուլի պաշտպանութեան միութիւն» անունով մի հիմնարկութիւն, որ բաղկացած է մամուլի և գրականութեան ներկայացուցիչներից: Նիստ է, ներկայ են Պետերբուրգի բոլոր լրագիրների կողմից պատգամաւորներ: Ի միջի այլոց զեկուցվում է մի այսպիսի հանգամանք: Բանւորական ընդհանուր գործադուլ է, Պետերբուրգում նոր սկսեց հրատարակվել սօցիալ-դեմօկրատական «Новая Жизнь» լրագիրը: Այդ լրագրի խմբագրութիւնը դիմում է գործադուլը ղեկավարող բանւորական կազմակերպութեան, խնդրելով որ իր համար բացառութիւն արվի և թոյլ տրվի որ թերթը հրատարակվի և գործադուլի ժամանակ:

Մամուլի ներկայացուցիչները համարեա միաձայն հասան այն եզրակացութեան, որ սօցիալ-դեմօկրատական թերթի այդ վարմունքը ոչ միայն անտեղի է, այլ և աչկարայ փորձում է կենդանացնել հին րեժիմի արտօնութիւնները: Մի ժամանակ կառավարութեան հաճելի թերթերը ամեն կերպ շոյվում էին Պլեվէի կողմից ի վնաս արդարութեան, մամուլի համար գոյութիւն ունեցող օրէնքների: Այժմ նորածին թերթը աշխատում է նոր րեժիմից ձեռք բերել նոյնպէս բացառիկ արտօնութիւններ, մինչդեռ այժմ տիրապետող պիտի հանդիսանայ հաւասարութեան իրաւակարգը:

Թերթի խմբագիր Հ. Մինսկի միայն այն ասաց ըստ էութեան, թէ սօցիալ-դեմօկրատիան է կազմակերպել գործադուլը, հետևաբար և նրա օրգանը պիտի իրաւունք ունենայ հրատարակվելու և գործադուլի ժամանակ: Երբ նրան նկատեցին թէ թերթը դեռ պաշտօնապէս չէ յայտարարված սօցիալ-դեմօկրատական օրգան, պ. Մինսկի վեր կացաւ և յայտնելով թէ չէ կարող մնալ մի ժողովում, ուր հաւաքված են բուրժուազիայի ներկայացուցիչները, հեռացաւ: Նրա հեռանալը որոտալից ծափահարութիւններ առաջացրեց բոլոր ներկայ եղողների մէջ:

Այդպէս էլ պէտք էր: Կորզի արտօնութիւնը: Ոչինչ բռնաբարում, ոչինչ ճնշում ու բռնակալութիւն չը պիտի լինի: Ամենքը հաւասար են...

Ապա մամուլի ներկայացուցիչները կայացրին մի վճիռ, որ մենք ողջունում ենք ամբողջ սրտով: Վճռեցին որ ապագայ քաղաքական գործադուլների ժամանակ լրագիրները ոչ մի դէպքում չը պիտի ենթարկվեն գործադուլի, որովհետև մամուլի բացակայութիւնը, մանաւանդ այս յուզված, սուր կրիզիսներ ապրող ժամանակներում, անհանգիստ, յաճախ անտեղի վնաս է բերում:

Դա մի մեծ և անուրանալի ճշմարտութիւն է...

ԿՐԿԻՆ Պ. ԿՈՍՏԱՆԵԱՆ

—

Տղամարդը նա է, ասում է ժողովրդական առածը, որ «գիտէ ջուրը մտնել կարող էլ, դուրս գալ կարողանայ էլ»:

Հայ Պոբեդոնոսցեւը (թէև դա մեծ պատիւ է)—պ. կ. Կոստանեանը այժմ «Թաժուղ»—մաքուր է դուրս գալիս:

Նա ամենևին մեղք չունի 1894 թւի ճեմարանական կատաստրոֆի մէջ: Նա «հիւանդ պառկած է եղել»... Այսինքն՝ վախից ներս էր մտել, և երբ կանչում են նրան, 3 ժամ դուռը թակում—նա, այդ «քաջ հովիւը» վախենում է տնից դուրս գալ, «իր անձը դնել ոչխարների վրա»:

Ճշմարիտ է, պ. Կոստանեանից առաջ կազմված էր այդ 80 աշակերտի ցուցակը. կազմողը Սարգիս եպիսկոպոսն էր, Ապարանի թագըն ու պսակը: Բայց պ. Կոստանեանի հռչակաւոր մանկավարժական միջոցը, նրա խորապէս մարդասէր ուղղութիւնը աւելի ևս «իւղ ածեցին կրակի վրա»:

—

«Լաւ» մարդ է պ. Կոստանեանը, գառնուկի նման միամիտ:

Նա պատասխանում է իր վրա դրված մեղադրանքներին, «զրպարտութիւններին», և իբր անմեղ մի «Յիսուսիկ», հրաւիրում է իր հետ երկար ժամանակ ծառայած, իր տեսչական և ուսուցչական խմբերը վայելած անձերին՝ կարծիք յայտնել, պաշտպանել... ճշմարտութիւնը...

Եւ շեշտում է պ. Կոստանեանը. «Այս կոչն անում եմ առհասարակ ճեմարանում դաստիարակված և գործունէութեան ասպարէզ մտած սերունդին, մանաւանդ հոգեւորականներին»... (Տես «Արշալոյս» № 55):

Այդ «մանաւանդ հոգևորականներին»-ը շատ մազալու է:

«Բէխի վրա լոյս էիջել. ո՞վ է տեսել—գիրը»:

Թուաժ բան է, ասում են Թիւրքահայերը:

Պ. Կոստանեանի ուղղութեան, նրա գործունէութեան մասին պէտք է վկայեն նրա այն սաները, որոնք այժմ հոգևորական են,—օրինակ՝ Կարապետ, Գարեգին, Բաբկէն, զուգէ նաև «քաղցրախօսն» Բենիկ վարդապետները:

Իսկ նրա հետ պաշտօնավար անձերից, երևի, կարծիք կը յայտնեն Արշակ Նահապետեանը, այժմ Նահապետ եպիսկոպոս, պ. Սէթ Յարութիւնեանը (և աշակերտ, և պաշտօնակից—թէ և կարեւագգեաց հոգևորական) և այլն, և այլն:

Ինչո՞ւ, աւելի լաւ չի՞ լինի, եթէ կարծիք հարցնենք Թիֆլիսի մայրապետից, պ. Պետրոս Սիմէօնեանից, Հայկունուց, և դրանց նմաններից:

—

Համբերութիւնդ ի չարն եմ գործ դնում, ընթերցող, բայց մի վայրկեան էլ սպասիր:

Ես էլ մի քանի ամիս եղել եմ պ. Կոստանեանի աշակերտը IV դասարանում:

Մի տեսարան:

Ղարաբաղցի մի աշակերտ, այժմ օֆիցեր, Մ. Մ.-Շ.-ը տախտակի մօտ է կանչված: Պ. Կոստանեանը 3 ամիս էր մեզ հայերէն էր դաս տալիս և այդ 3 ամիսը շարունակ զբաղեցրել էր այն հարցով, որ գրաբարի «ք» յոգնակականացուցիչ նշանը աշխարհաբարում դառնում է «եր» կամ «ներ»:

Պ. Կոստանեանը թելադրում է.

«Ցուրտ-ցուրտ ձմրանք խեղճ պառեցին բարձր ճակատը հայոյն»...

Մ. Մ.-Շ.-ը, մեր ընկեր «Բարձրաւանդակը» (այդպէս էինք նրան կոչում)—մի սխալ էր արել: Պ. Կոստանեանը հրաւիրում է նրան ուղղել իր սխալը: Նա պնդում է, որ դա այդպէս է գրվում:

«Քեզ նման էշ Ղարաբաղցին այդպէս կը գրէ»—ասում է պ. Կոստանեանը:

Եւ արցունքները հոսում են մեր սիրելի ընկերոջ աչքերից:

Աղմուկ, դժգոհութիւն ամբողջ դասարանում:

Եւ պ. Կոստանեանը դեռ համարձակվում է ուղղութեան, գործունէութեան մասին խօսել:

Դուք բթացնող էք, պ. Կոստանեան, դուք մանկասպան էք և ոչ մանկավարժ:

Սլաք

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

I

Վերանորոգվող կեանքը իր բարձր պահանջները ունի ժամանակակից թատրոնից և թատրոնական գործողներից:

Տուէք մեզ խելացի պիեսներ, որոնց մէջ կեանքի երևոյթները և ժամանակակից հասարակութեան հոգեկան պահանջները արտացոլված լինեն:

Իսկ պիեսը կատարելութեամբ խաղալու համար կարևոր է, որ և դերասանները գիտակցաբար վերաբերվեն կեանքի երևոյթներին, խոր կերպով ըմբռնեն պիեսի իմաստը, գործողների աշխարհայեացքը և հոգեբանութիւնը և ներկայացնեն կեանքը այնպիսի հաւատարմութեամբ, որ հանդիսականը տեսնէ պիեսի հեղինակի միտքը լրիվին վերարտադրված բեմի վրա:

Մենք չենք կամենում այսօր օրինակներ բերել, թէ ինչպէս դերասանները յաճախ ամենևին հասկացած չեն լինում ոչ միայն պիեսի իմաստը, այլ և իրանց դերերը և նոյն իսկ շատ նախադասութիւններ ու բառեր: Եւ միթէ մի անձ, որ ինքը չէ գիտակցում թէ ինչ է ներկայացնում և ինչ է ասում, նա կարող է տպաւորութիւն գործել հանդիսականների վրա:

Երբե՞ք:

Եթէ թատրոնը հասարակական կրթարաններից մէկն է, եթէ թատրոնի միջոցով վճռված է կեանքի դրամաներ և խոր հոգեկան զգացմունքներ յայտնել, ապա անհրաժեշտ է, որ թատրոնի գործողները մշտապէս աչքի առաջ ունենան բեմի այդ էական նշանակութիւնը և վերաբերվեն գործին ամենայն լրջութեամբ:

Կար ժամանակ, որ հասարակութիւնը բաւական էր լինում թատրոնից, երբ նա տեսնում էր զուարճալի տեսարաններ, սաստ ծիծաղում էր թատրոնում և վերադառնում էր տուն գոհ այն ժամերից, որ անց էր կացրել թատրոնում:

Այժմ հասարակութիւնը աւելի մեծ պահանջներ ունի թատրոնից: Ծիծաղի և զուարճութեան նա երկրորդական, երրորդական, տասներորդական տեղն է տալիս թատրոնում: Նա ցանկանում է տեսնել իսկական դերասանների և ոչ թէ ծաղրածուների, նա ցանկանում է տեսնել և բեմական գործողի մէջ ազատ, առաջադիմող քաղաքացու, որ գիտէ իր ժամանակի վշտերը և հոգեկան պահանջները, որ ընդունակ է արտայայտել ժամանակի ոգին բեմի վրա:

Թատրոնական կոմիտեներ և դերասաններ. հասարակութիւնը այսօր ձեզնից սպասում է ներկայացումներ, որոնցով դուք բաւարարութիւն տայիք նրա ժամանակակից հոգեկան տրամադրութեան և բեմից յուզէիք նրան այն գաղափարներով և զգացումներով, որոնք սկսել են կենսատու շունչ փչել հասարակութեան խաւերում:

Ժամանակի ոգին պէտք է իր մէջ ընդգրկի թատրոնը իր բոլոր գործողներով:

Սիրող

II

Մեզ խնդրում են յայտնել, որ յօգուտ Բագուի աշակերտների և աշակերտուհիների, անցեալ հոկտեմբերի 20-ին նշանակված ներկայացումը, տեղի կունենայ ամսի 17-ին, Արտիստիկական թատրոնում, և կը խաղացվի Կօսօրօտօվի «Գարնանային հեղեղ» վերնագրով գեղեցիկ պիեսան: Գնված տոմսակները վաւերական են համարվում: Նոր տոմսակներ կարելի է ստանալ վաղօրօք նաև «Արշալոյսի» խմբագրատանը, պ. Վ. Փ. Փափազեանի մօտ, ժամը 10—2:

ՀԱՅԿԱԿԱՆ ՔՐՕՆԻԿ

Մեր ճակատագիրը.—Մի հայի դատը Ամերիկայում.—Մեր մեղքի բաժինը:

Ո՛չ մի ժամանակ հայութեան ապագան այնքան մռայլ, յուսահատական գոյներով չէ ներկայացել, որքան այժմ: Ո՛րքան տառապել ենք մենք, ո՛րքան նահատակվել, բայց մեր Գողգոթայի վախճանը դեռ ևս չէ երևում: Բարբարոս ու արիւնարբու դարերը, բռնութեան ու խաւարի ժամանակները գլել անցել ենք, հասել ենք գիտութեան ու քաղաքակրթութեան, արդարութեան ու ճշմարտութեան օրերին, կոխել ենք XX դարի մէջ, բայց մեր ճակատագիրը մնացել է նոյնը—ողբերգական ու անգութ:

Խաչվեցինք անցեալում: Գոնէ մի փոքր թեթևութիւն լինէր ներկայումս: Մի քիչ հանգստութիւն մեր յոգնած, վիրաւորված մարմնի համար, մի քիչ խաղաղութիւն մեր տանջված, փոթորկված հոգու համար: Բայց ո՞րտեղ է հանգստութիւնը, խաղաղութիւնը հայու համար: Հալածված՝ Մայր-Երկրում, հալածվում ենք և օտար, քաղաքակիրթ երկրների տակ:

Ամեն տեղ հայը լաց է լինում, լաց է լինում իր անիծված բաղդի, իր ողբերգական, անյուր ճակատագրի վրա:

Կոտորեցին, կոտորում են մեզ Թիւրքիայում, կոտորեցին և կոտորում են մեզ Կովկասում, կոտորվելու վտանգի մէջ ենք և Պարսկաստանում:

Մայր-Հայրենիքում արիւն, աւերած:

Գոնէ հեռաւոր շունչ քաշենք գաղթականութիւններում:

Բայց հայի համար ոչ մի տեղ հանգստութիւն չը կայ: Ազատ Ամերիկան անգամ մի դժոխք է, մի բանտ՝ հայի համար:

Այս տխուր եզրակացութեան է գալիս մարդ, կարդալով պատմութիւնը մի վերին աստիճանի վրդովեցուցիչ դատի, որ տեղի է ունեցել Կալիֆօրնիայում և որի ըմբոստացուցիչ մանրամասնութիւնները բերում է մեզ ամերիկահայ մամուլը:

Ահա տխուր փաստը:

Կալիֆօրնիայում բնակվող Պետրոսեան անունով մի հայ իր այգին ոռոգելու համար ջուրը կապում է դէպի իր այգին: Նրա հարևանը՝ Տէյլոր անունով մի ամերիկացի, գալիս սպառնում է հային, որ չը դիպչէ ջրին: Պետրոսեան նրան առարկում է, որ ջուրը կապելու հերթը իրանն է այդ օրը: Բայց Տէյլոր, ազատ Ամերիկայի այդ ազատ քաղաքացին, ոչինչ չէ ուզում լսել: Պետրոսեան՝ տեղացու հեռանալուց յետոյ, ջուրը նորից կապում է: Տէյլոր կատաղած՝ գալիս տեղն ու տեղը սպանում է հային իր րեվօլվերով:

Փաստը, ինչպէս տեսնում էք, ըստ ինքեան վրդովիչ, իր ստորութեամբ, զարշելի անիրաւութեամբ նսեմանում է դատավարութեան պատմութեան առաջ:

Հոկտեմբերի 18-ին տեղի է ունենում դատը և տևում է մեկ ամբողջ օր: Տէյլորին պաշտպանում են Բրըճս և Կլէա, երկու փաստաբաններ: «Հայու մը համար իրական չարչարանք էր ներկայ գտնվել այդ դատին» գրում է ականատես թղթակիցը: Ինչո՞ւ:

«Հոն որ և է ունկնդիր կարող էր սուզել չափը այն սոսկալի ատելութեան ու նախապաշարումին, որ տեղական ժողովուրդը կը տածէ հայոց նկատմամբ: Հոն դիւրին էր ճանչնալ հայատեաց անհատներ, որոնք շատ անգամ մեզ համակիրներ կը ձևանային: Հայ մը սպանուած էր Ամերիկացիի մը ձեռօք. 12 անդամ մարդ (երդուեալ դատաւորներ) գտնուած էր մարդասպանը դատելու համար: Հարիւրի չափ խելացի կարծուած քաղաքացիներ քննութեան ենթարկուեցան: Ասոնց բոլորն ալ մօտաւորապէս նախապաշարուած էին: Հայու մը խօսքին չէին կրնար հաւատալ, զայն չէին կրնար դասել սովորական մարդու մը կարգը, անոր նկարագիրը, արժանիքն ու պատիւը ինկած կը նկատէին: Հայը խաբեբայ էր, ստախօս էր, խարդախ ու անվստահելի էր անոնց աչքին, որոնց ատելութիւնը ամբաստանեալի ծծած փաստաբանին ալ հոգին մէջ արձագանք կը գտնէին: Լացինք հոն: Մեր ցաւն ու զայրոյթը ջանացինք պահ մը արտասուքի մէջ խեղդել»:

Արդարութիւնը, աղաղակող արդարութիւնը խեղաթիւրվում է և ամերիկացի երդուեալների և վկաների հոգու մէջ, որովհետև ազգայնութեան հարց կայ մէջտեղը. անիրաւածը, սպանվածը մի հայ է, իսկ սպանողը ամերիկացի:

«...Մասնաւորապէս ականատես Ահարոնեանի անհերքելի պատմութիւնները բաւականէն աւելի էին Տէյլորը գոնէ ցմահ. բանտարկութեան դատապարտելու՝ եթէ ազգայնութեան խնդիրը գլխաւոր դերը կատարած չըլլար այս եղեռնական թատերաբեմին վրայ:

«Մարդասպանին կողմն ալ իր վկաները բանակը բերաւ ու խօսեցաւ: Ասոնք ջանացին մարդասպանին ինքնապաշտպանութեան չքմեղանքը նաև պահել՝ կախաղանին շուքէն դուրս բերելու համար անպարտական մարդասպանը: Եւ յաջողեցան անոնք, որովհետև,.... Մնացեալը աւելորդ է կրկնել:»

Բայց դեռ լսեցէք: Ջոնի դատապարտութիւնը, արդարութեան բռնաբարումը փոքր են այն վրէժխնդիր ու խնկարկօրէն, ցածօրէն վրէժխնդիր պաշտպանողականի առաջ, որ արտասանել են մարդասպանի փաստաբանները, այդ քաղաքակիրթ վայրենիները: Պետրոսեանի դատապարտութիւնը բաւական չէ, նրա մէջ դատապարտվում, հայհոյվում է և ամբողջ հայ ազգը:

«Ամբաստանեալի փաստաբաններուն փակման ճառերը հայ ունկնդիրներուն զայրոյթը արդար ցասման գագաթնակէտին բարձրացուցին: Դատաւոր Ջըրջ չհամարձակեցաւ այդ կատաղածներուն անհերքելի ծայրայեղութեանց առջև սահման մը գծել: Կլէա, գարշելին նոր եկող անփորձ տղեկը՝ որ այս առթիւ իր անդրանիկ ճառը խօսեցաւ Բարձրագոյն Դատարանին մէջ, իր բոլոր զօրութիւնը ամփոփեց Հայութիւնը անպատուելու մէջ: Աջ ու ձախ զարկաւ անխնայ, ստեց ու հայհոյեց և դատապարտեց ազգ մը որուն պատմութեան տգէտ էր բոլորովին: Այս թեթեւամիտ լակոտին վայրահաչութեանց յաջորդեց Տէյլորի միւս փաստաբանը՝ Բրըճս անուն ցնորած ծերուկը՝ նենգ, կոկորդիլ, վարունգաձև գլուխով, կարմրած քթով, կիսամեռ, որդնած մէկը, որուն տեղացիք ծեր հրէշ անունը կուտան իրաւամբ: Այս անտանելի մարդն ալ, քանի մը գլխաւոր կէտեր բացատրել կամ լուսաբանել աշխատելէ վերջ, հինցած ակնոցները վար առաւ պահ մը, երկար շունչ քաշեց ու քթին խլեզը սրբելով իր տաղտկալից խօսքերով յարձակիլ սկսեց հայութեան վրայ, որոյ մասին ոչինչ գիտէր: Ցնորած հրէշը՝ որ սատանայ մը ըլլալէ զատ կրնար թերևս ուրիշ ամէն բան ըլլալ, անարգեց հայութիւնը շատ անխիղճ ու փողոցային լեզուով՝ արդարացնելու համար Տէյլորը հայ մը սպաննած ըլլալուն համար, հայ մը... որ նշանակութիւն և օգուտ մը չունի եղեր աշխարհի: Բրըճսի խօսքին նայելով՝ Պետրոսեանը զաւակն էր խաբեբաներու, ստախօսներու ու աննկարագիր խարդախներու ցեղի մը, որուն աշխարհն չի հաւատար, և զոր մարդիկ կատեն ամէն տեղ. այնպիսի մէկը որ ոչ հայր ունի, ոչ մայր և ոչ ալ ողբացող մը, այսօր մեռնի է կամ քանի մը տարի վերջ, տարբերութիւն չի ըլլար եղեր, ու աշխարհս առանց Պետրոսեանի աւելի երջանիկ է եղեր: Ով տրամաբանութիւն ու փաստաբանի վայելուչ խօսքեր...»

Ի՞նչ աւելացնել այս շնչահեղձ անող պատմութիւնից յետոյ: Ի՞նչքա՜ն այս մոլեգնութիւնը՝ մի արիւնոտած, մարտիրոսացած ցեղի դէմ:

Անկասկած թշուառ, տկարի դէմքը հեռու է հրապուրիչ լինելուց, անխիղճ ստութեան, անտանելի հարստահարութեան ու ոսկեզօծված փտութեան այս ժամանակներում:

Բայց արդեօք մենք էլ մեր մեղքի բաժինը չունենք: Այն եղբայրասպան կռիւը, այն խայտառակ ու գայթակղեցուցիչ տեսարանները, որ պարզում են հայերը Կովկասից մինչև Ամերիկա, անխուսափելիօրէն պիտի արտագրէին իրանց թշնամու պատիւը:

Եւ արտագրում են:

Հայութեան այս զարհուրելի ճգնաժամում, չը պէ՞տք է վերջապէս ինքնամփոփվենք, մեր երկպառակված կամքերը, մեր ցիրուցան կարծիքները միացնելու և պաշտպանելու համար ամեն տեղ մեզ սպառնացող արտաքին վտանգի դէմ:

Վերջապէս միմեանց չը պիտի՞ հասկանանք, միմեանց ցաւի վրա չը պիտի՞ լանք, մեր փոխադարձ դուրգուրանքներով, միմեանց սփոփելու, միմեանց արիացնելու համար...

Տ. Զաւէն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, նոյեմբերի 14-ին, Նորին Կայսերական Մեծութեան Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի անուանակոչութեան տօնի առթիւ տեղի ունեցաւ Ալեքսանդրո-Նեվսկի տաճարում պատարագ և մաղթանք, որից յետոյ կատարվեց զօրահանդէս: Մաղթանքներ կատարվեցին հայոց Վանքի մայր եկեղեցում և միւս դաւանութիւնների աղօթատներում: Քաղաքը զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան կատարվեց հրավառութիւն:

—

Այսօր ճաշից յետոյ ժամի 5-ի գնացքով Վեհափառ Հայրապետը Ալէքսանդրապոլից կը ժամանէ Թիֆլիս: Վեհափառին երէկ ընդառաջ էր գնացել Գարեգին արք. Սաթունեան, Նահապետ եպիսկոպոսի և կոնսիստորիայի նախագահ Զարզեցեանց քահանայի հետ:

—

Որպէս «Իվերիա» լրագիրը լսել է, Թիֆլիսի փոխ-նահանգապետ Ալեշեվսկի Բագուի նահանգապետ է նշանակվում:

—

Բագուի գեն.-նահանգապետը հաղորդում է Փոխարքայի դիւանին նոյեմբերի 9-ից, որ Բագւում և շրջակայքում խաղաղութիւն է տիրում. Բիբի-Էյբաթում հայ բանւորներն սկսեցին աշխատել:—Տարօրինակ զեկուցումներ է տալիս գեներալ Ֆաղէեւը. կարծես թէ հայերը գործադուլ էին արել կամովին և այժմ վերսկսում են աշխատանքները: Առաջին անգամ չէ, որ Ֆաղէեւի հաղորդագրութիւնները կրում են այդ գոյնը: Խեղճ հայ բանւորների գլխի վրա կախել են Թուրքի ու խուլիգանների Դամօկլեան սուրը և ասում են աշխատիր»: Աշխատիր—երբ ամեն րօպէ կարող ես սպանվել... Լաւ լօգիկա է:

—

Նոյեմբերի լոյս 11-ի գիշերը Բագուի կլուբից դուրս են գալիս հիւրերը տուն գնալու: Դրանց մէջ է լինում և տեղական զօրքերի գլխաւոր գնդապետ Տօլմաչէվը, աղէտալի օրերի հայրենասէրների միջնորդ ու պաշտպան հանդիսացող անձը:—Գնդապետը մտնում է մի մութ փողոց:—Կազակները, որ Բագւում կատարեալ թալանների ու կոտորածների դեր են սկսել կատարել գիշերները, որսի դուրս եկած են լինում: Մի կազակ մօտենում է գնդապետին, առանց նրան ճանաչելու, բռնում է օձիքից, որ կողոպտէ, բայց երբ նկատում է նրա ով լինելը, դիւահարի նման թողնում-փախչում է: Գնդապետը կանչում, բղաւում է, որ կանգնէ, բայց կազակը չէ լսում: Գնդապետը կրակում է նրա ետևից իր ատրճանակը, բայց ասում են, գնդակը չէ կպչում:—Ինչո՞ւ գնդակ արձակել մի կազակի վրա... Ամբողջ Ռուսաստանը բողոքում է բոլոր կազակների դէմ:

—

Հոկտեմբերի 22ին Թիֆլիսի 1-ին գիմնազիայում տեղի ունեցած արիւնհեղութեան հանգամանքները քննելու առիթով, գիմնազիայի դիրեկտոր Գամզրկելիձէ հրաժարական է տալիս իր պաշտօնից: (Իվերիա):

—

«Chicago Daily News» լրագրի թղթակիցը հեռագրում է Պետերբուրգից, որ կոմս Ս. Յու. Վիտտէ խնդրեց Թագաւոր Կայսրից, որ զինւորական, ծովային և պալատի մինիստրները և պետական պաշտպանութեան կօմիտէի նախագահը ենթարկված լինեն մինիստրների խորհրդին, մնացած մինիստրների հետ համահաւասար: Կոմս Վիտտէն նոյնպէս ներկայացրեց զեկուցում [illegible] նահանգապետներին պաշտօնից արձակելու [illegible] Վիտտէի այդ բոլոր խնդիրքները մերժվեցին, որից յետոյ նա հրաժարականի խնդիրք տուեց, բայց նրա հրաժարականը չընդունվեց:

—

Գործակալական հեռագիրները հաղորդեցին կարճառօտ և բնորոշ տեղեկութիւններ ռուս գերիների կատարած անկարգութիւնների մասին փոխադրիչ նաւերի վրա, ուր նրանց նստեցրել էին հայրենիք վերադարձնելու համար: Որպէս հաղորդում են արտասահմանեան լրագիրները, անկարգութիւններն սկսվել են քաղաքական հողի վրա: Նաւաստիների և զինւորների միջին կազմվել է երկու կուսակցութիւն—մէկը յեղափոխական, իսկ միւսը պահպանողական: Այդ կուսակցութիւնների միջև տեղի ունեցան երկպառակութիւններ, որոնք վերջացան ծեծով: Ներկայումս գերիների տրամադրութիւնը այնքան գրգռված է, որ ռուս օֆիցերները վախենում են ծով դուրս գալ նրանց հետ:

—

«Standard» լրագրի հեռագրի համաձայն, Վաշինգտոնի կառավարութիւնը շտապով Կրօնշտադտ ուղարկեց «Minneapolis» կրէյսէրը այնտեղ ապրող ամերիկական քաղաքացիների շահերը և ապահովութիւնը պաշտպանելու համար:

—

Ջարդերից տուժած հրէաների օգտին Նիւ-Եօրկում մինչև նոյեմբերի 16 (3) հաւաքված էր 400 հազար դոլլար (800 հազար րուբլի): Յոյս ունեն հաւաքել 1 միլիոն դոլլար: (N. Fr. Pr.):

—

Վերջին աղէտից տուժածների օգտին ստացանք Ս. Մամուլեանի որդու մկրտութեան ժամանակ Տէր-Գրիգոր Կախոյեանի ձեռքով հանգանակած՝ ներկայ գտնվող երախտաւորներից 5 րուբլի, յանձնելու մասնաժողովին:

—

Ջիբրայէլի գաւառի Վանք գիւղից մենք ստացանք հետևեալ հեռագիրը. «Հերքում ենք Հադրութի դպրոցի տեսչի զեկուցումը, որ իբր թէ աշակերտները հրաժարվում են վճարել ուսման թոշակ: Տեսուչը հրաժարվում է ընտրված հոգաբարձուների հետ միասին ծախսերի նախահաշիւը կազմել և համարում է իրան նեղացած: Հաղորդված է այդ մասին դիրեկտօրին: Հոգաբարձուներ Լալայեանց, Տէր Մանուկեանց»:

—

Լուրեր են պտտում, որ 5 տոկոսանոց հարկը դրամագլուխներից և եկամուտներից, գանձարանի ծանր ֆինանսական դրութեան պատճառով, մեծացնելու է նշանաւոր չափով: (С. От.):

—

«С. От.» լրագիրը լսել է, որ այս օրերս կը կայանայ զանազան կուսակցութիւնների ներկայացուցիչների ժողով սահմանադիր ժողով գումարելու հարցը քննելու համար:

—

Ժամանակաւոր օրէնքը մամուլի մասին, որպէս հաղորդում են «С. От.» լրագրին, արդէն մշակված է և կը հրատարակվի նոյեմբերի 10-ին կամ 11-ին: Նոր օրէնքը օրինականացնում է լրագիրների լոյս տեսնելու սահմանված կարգը, այսինքն լրագիրները չեն ենթարկվում նախնական ցենզուրայի և պատատեան չեն ներկայացվում գրաքննական կոմիտէար հրատարակութեան իրաւունք ստանալու համար: Պատասխանատուութիւնը բացառապէս դատարանով է. իրական է նոր օրէնքը մինչև Պետական Դումայի կողմից մշակուած օրէնք հրատարակելը:

«Ցնորք-Փուրքիկ» լրագիրը տպագրել էր մի երկար մեղադրական փելիետոն, որով Գորու գաւառի և Գորիսյի անհաջողութիւնների, Թիֆլիսի օգոստոսի 23 և նոյեմբերի 22-ի անցքերի, հայ-թուրքական արիւնալի ընդհարումների մէջ մեղադրում էր Կովկասի ոստիկանական մասի գլխաւոր գեներալ Շիրինկինին: Վերջինս իր կարգին „Кавк." լրագրում տպագրել է մի հերքում, որով յայտնում է, որ զինւորական վիճակում հրատարակված նահանգների միակ պատասխանատուները գեն.-նահանգապետներն են և ոչ ինքը: «Իսկ թուրքական արդատանքների առիթով իմ վրա դրած մեղադրանքների հերքումը ես թողնում եմ տեղական հայ գաղութի ներկայացուցիչներին, որոնց բաւարար չափով յայտնի է իմ գործունէութիւնը հայ-թուրքական ընդհարումների հարցում»:—Թէ ինչ կը պատասխանեն այդ կոչին Թիֆլիսի հայ գաղութի ներկայացուցիչները, այդ մենք չենք կարող ասել առ այժմ:

Նոյեմբերի 13-ին Կովկասի Փոխարքայի օգնական գեն.-լէյտենանտ Մալաման այցելեց զինանոցների և մետեխեան փողի պահեստի այն զինւորներին, որոնք տուն են վերադառնում: Գեներալը դիմել է պահեստի զինւորներին և յորդորել, որ նրանք տուն վերադառնալիս այնպիսի անկարգութիւններ չանեն, ինչպէս Կովկաս գալիս թոյլ տուին:—Այդ, կաւելացնենք մենք—պահեստի զինւորները ոչ միայն գալու ժամանակ, այլ այստեղ, Թիֆլիսում էլ իրանց շատ վատ պահեցին: Զօրքի վարքն սկսում է ընկնել սոսկալի ճղղվրքի աւքում, որովհետև կարգապահութիւնը վերանում է և նրա տեղը կրթութիւն ու զարգացումը տեղ չեն բռնում:

Ինչպէս յայտնի է, այս տարի Կովկասի զինւորագրութիւնը կատարվեց արտակարգ պայմաններում: Նախ և առաջ նորակոչներից շատ քչերը ներկայացան վիճակահանութեան, երկրորդ՝ ներկայացողներից էլ նրանք, որոնց վիճակը դուրս եկաւ, գնացին տուն և շատերն այլևս չը ներկայացան: Այդպիսով ստացվեց հետևեալ պատկերը. վիճակահանութիւն կատարվեց, իսկ նորակոչներ դեռ ևս չը կան: Զինւորական վարչութիւնը, երևի այդ հանգամանքն աչքի առաջ ունենալով, նորակոչների զէնքի տակ հրաւիրվելը մի ամսով էլ յետաձգվում է Թիֆլիսի նահանգի համար: Նոյն կարգադրութիւնը, ներքին գործերի և զինւորական մինիստրների համաձայնութեամբ, եղել է ոչ միայն Թիֆլիսի, այլ և բոլոր նահանգների վերաբերմամբ:

Երէկ, երեկոյեան ժամը 6-ին, Կոջորի շոսէի վրա, Լօլաձէի տան դիմաց անյայտ անձինք բերդանկով սպանեցին Թիֆլիսի գաւառական վարչութեան ստրաժնիկին:

Երէկ, երեկոյեան ժամը 5-ին, Նորաշէնսկի փողոցի վրա անյայտ մարդուց սպանվեց մի [illegible]:

Կովկասի Փոխարքան թոյլատրեց Թիֆլիսի քաղաքացի Մամեդ-աղա Վեքիլովին հրատարակել Թիֆլիսում թուրքերէն լեզուով մի ամենօրեայ լրագիր «Իզհար» անունով, որի հրատարակութիւնը կը սկսվի նոր տարուց: Այդ լրագրի խմբագիր հաստատվեց պ. Մամէդ-Ղուլի-Զադէն:

Երէկ, նոյեմբերի 13-ին, Մուշտայիդի այգում, կազմվեց մոլոկանների միտինգ: Հաւաքվել էին մօտ 500 մարդ: Երբ նախագահը, դիմելով ժողովին, ասաց թէ ով կառավարութեան կողմն է, թող ձեռքը բարձրացնէ, հանդիսականները բոլորը միասին ձեռքերը բարձրացրին: Ապա նախագահը, գոհ սրտով, առաջարկեց երկրորդ հարցը, թէ ով սօցիալ-դեմօկրատների կողմն է, թող ձեռքը բարձրացնէ, կրկին վեր բարձրացան 500 մարդկանց բոլոր ձեռքերը: Երբ նախագահը շփոթված ասաց նրանց, թէ այդ ինչպէս է, որ համ կառավարութեան կողմն են, համ էլ սօցիալ-դեմօկրատների, մոլոկանները հանգիստ կերպով պատասխանում են թէ «какъ прикажутъ».

Դոկտոր Ա. Ս. Պրոխանովին թոյլատրված է Թիֆլիսում հրատարակել „Духовный Христіанинъ" անունով մի ամսագիր, որ նուիրված է լինելու մոլոկանների հոգևոր և տնտեսական պէտքերին:

Թիֆլիսում լուր է պտտում, որ մի խումբ ինտելիգենտ թուրքեր ցանկութիւն ունեն առանձին կլուբ բաց անել Թիֆլիսի մահմեդականների համար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՎԻՃԱԿԸ

Քաղաքական աշխարհի ընդհանուր ուշադրութիւնը, բնականաբար, սևեռված է Ռուսաստանի յեղափոխական և քաղաքական շարժման վրա, որովհետև ռուսական դէպքերի ազդեցութիւնը ահագին է եւրոպական երկրների հասարակական կարծիքի վրա:

Ամենից շատ յուզվում և ալեկոծվում են Ռուսաստանի հարևաններ՝ Գերմանիան և Աւստրիան, գլխաւորապէս Լեհաստանի հարցի առիթով:

Գերմանական լրագիրները, անխտիր, ամեն տեսակ ուղղութեան, քննութեան ենթարկելով Գերմանիայի դրութիւնը, և կապելով նրան միջազգային վերջին կոմբինացիաների և ռուսական դէպքերի հետ, գալիս են այն եզրակացութեան, որ այդ դրութիւնը խիստ լուրջ է: Գերմանիային, ասում են նրանք, մեծ վտանգներ են սպառնում: Արևմուտքում նրա դէմ են համախմբվում այն մեծ պետութիւնները, որոնց ծովային ույժերը գերազանց են գերմանական ծովային ույժերից: Ներկայումս Գերմանիան, կայսրութեան հիմնարկութիւնից ի վեր, երբեք այնպիսի մեկուսացած դրութեան մէջ չէ գտնվել, ինչպէս այժմ. նա չունի ոչ մի դաշնակից և յոյս պէտք է դնէ միայն իր սեփական ույժերի վրա: Որքան էլ զօրեղ լինի այն համոզմունքը, թէ միջազգային խաղաղութեան սպառնացող անհամաձայն հասանքները վերջ ի վերջոյ տեղի կը տան ընդհանուր խաղաղասիրութեան առաջ, բայց գտնվելով այդպիսի կղզիացած դրութեան մէջ, Գերմանիան պէտք է պատրաստ և կազմ լինի ամեն տեսակ պատահականութեան առաջ. իսկ դրա համար անհրաժեշտ է, որ նա ներքուստ միացած լինի, որ ամբողջ կայսրութիւնը, աղէտի դէպքում, մի հոգի և մի բերան, դուրս գայ վտանգի առաջ և պաշտպանվէ: Դրա համար հարկաւոր է, որ լինի ներքին միաբանութիւն, միացումն արտաքին վտանգի առաջն առնելու համար: Տարաբախտաբար, ներքին միութիւն չը կայ Գերմանիայում, միութիւն և միաբանութիւն չէ կարող լինել մի երկրում, ուր քաղաքացիները հաւասար իրաւունքներ չեն վայելում: Պրուսիայում և Սաքսոնիայում ընտրողական իրաւունքի անկատար և անարդար ձևի պատճառով մեծ դժգոհութիւն է տիրում. օրէցօր զօրեղանում է շարժումը, ագիտացիան յօգուտ ընդհանուր ընտրողական իրաւունքի: Պրուսական թագաւորութեան մէջ ռէժիմը, որ գրեթէ ոչնչով չէ տարբերվում վաղուց ամենքից դատապարտված ինքնակալական ռէժիմից, թէև Պրուսիան սահմանադրական միապետութիւն է, օգուտ է բերում միայն առանձնաշնորհեալ դասակարգերին: Հարկերի բաշխումը այդտեղ միահաւասար չէ. խօսքի, մամուլի ազատութիւնը բացարձակ չէ. մի խօսքով, բացարձակ, միահեծան ռէժիմի հետևանքներ դեռ շատ և շատ կան, որոնք առաջ են բերում ընդհանուր դժգոհութիւն և երկպառակութիւն, հետևաբար, արտաքին վտանգի րոպէին, կառավարութիւնը չէ կարող բացարձակ յոյս դնել երկրի միահամուռ գործակցութեան վրա:

Արևելեան կողմում Գերմանիայի առաջ կանգնած է մի այլ վտանգ: Այդ այն է, որ Ռուսաստանում ծագած յեղափոխական կոհակները կարող են հասնել գերմանական սահմաններին, հէնց արդէն այն պատճառով, որ նախ ամեն մի յեղափոխութիւն ինքն ըստ ինքեան վարակիչ է, երկրորդ, լեհական հարցը մեծ բարդութիւններ կարող է առաջ բերել և հրդեհը կարող է ռուսական Լեհաստանից անցնել գերմանական Լեհաստանը:

Վիլհելմ II կայսրի բացարձակ և ինքնակալական ձգտումները այն հետևանքն ունեցան, որ Գերմանիան այսօր մեկուսացած է, ոչ մի դաշնակից չունի, բացի Կարմիր Սուլթանից և ներքուստ ևս մատնված է երկպառակութեան:

Աւելի լաւ դրութեան մէջ չէ գտնվում Աւստրիան, ուր ազգութիւնների պայքարը և վերջերս ևս ռուսական Լեհաստանի դէպքերը յուզում, մրրկում են ամբողջ երկիրը: Մեծ դժուարութիւններ ստեղծել էր նաև երկաթուղային ընդհանուր գործադուլը և ընդհանուր ընտրողական իրաւունքի համար մղված եռանդուն և բուռն կռիւը: Սակայն որ աւստրիական մինիստր-նախագահ Գաուչի վճռականութիւնը՝ ձեռնարկել ընտրողական ռէֆորմի իրագործման և նրա ձեռք առած միջոցները, որոնցով երկաթուղային գործադուլը փոխադարձ զիջողութեամբ աւարտվեց, ստեղծել են նպաստաւոր տրամադրութիւն դէպի կառավարութիւնը և աւստրիական ռէյխսրատի գումարումը հնարաւոր դարձրել, որովհետև թէ բանւորական դասակարգերի և թէ առաջադէմ կուսակցութիւնների ներկայացուցիչները խոստացել են Գաուչին աջակցութիւն և այդ պատճառով կայսերական հրովարտակով ռէյխսրատի գումարումը նշանակված է նոյեմբերի 15-ին: Գալով աւստրիական լեհերին, նրանք ի նշան սգոյ և տրտմութեան՝ ռուսական Լեհաստանի անցքերի պատճառով, փակել են իրանց բոլոր ժողովարանները, թատրոնները:

Ֆրանսիայում օրվայ կարևոր հարցը եկեղեցին պետութիւնից բաժանելու օրինագծի քննութիւնն է սենատում և Ռուվիէի մինիստրութեան բաւական խախուտ վիճակը: Մինիստրութեան մէջ մասնակի ճգնաժամ ծագելով, Բերտօն հրաժարվեց պատերազմական մինիստրի պաշտօնից, իսկ Էտիէնը հրաժարվեց ներքին գործերի մինիստրի պաշտօնից: Այդ ճգնաժամը առաջացաւ մի հարցի քննութեամբ պարլամենտում, որի քուէարկութեան ժամանակ Ռուվիէն յանկարծ կորցրեց 249 հանրապետական ձայներ, այսինքն երկու-երրորդական ձայնը այն մեծամասնութեան, որի վրա մինչև այժմ յենված էր իր մինիստրութիւնը: Այդ հարցը, որ իր էութեամբ, շատ հետաքրքրական է, հետևեալն է.

1884 թ. մարտի 21-ին հրատարակված մի օրէնքի համաձայն, հասարակութեան բոլոր խաւերին իրաւունք է տրվում կազմակերպվել և սինդիկատներ կազմել: Օգտվելով այդ իրաւունքից, պետական պաշտօնեաները, աստիճանաւորները և գիւղական ուսուցիչները վերջին տասը տարվայ ընթացքում սկսեցին նոյնպէս սինդիկատներ կազմել և ձգտումն ցոյց տուեցին նոյն իսկ գործադուլներ անել: Սակայն Ռուվիէի մինիստրութիւնը այլ կերպ նայեց հարցին և գտաւ, որ պետական պաշտօնեաները իրաւունք չունեն սինդիկատներ կազմելու և այդ պատճառով դատի ենթարկեց Պարիզի ուսուցիչների մի խումբ, որ կազմակերպվել էր սինդիկատ: Այդ մասին հարցապնդումն լինելով պարլամենտում, հանրապետական մեծամասնութիւնը քուէարկեց ընդդէմ մինիստրութեան, ուստի մինիստրութեան այն անդամները, որոնք պատկանում են արմատական-սօցիալիստական կուսակցութիւններին, ինչպէս Բերտօն, ստիպված էին կամ հրաժարվել իրանց համոզմունքից, կամ դուրս գալ. այդպէս էլ արաւ Բերտօն, որի պաշտօնը յանձնվեց Դիւբիէֆին, որ նոյնպէս արմատական-սօցիալիստ է:

Այդ ժամանակ և պարզվեց, որ մինիստր-նախագահ Ռուվիէն, որը մինիստրութիւն կազմելիս, հանդիսաւորապէս խոստացել էր յենվել բացառապէս ձախ կողմի վրա, հակառակ է ցոյց տալիս յենվել աջ կողմի վրա, ուստի սպասվում էր, որ ծայրայեղ ձախակողմեան կամ արմատական-սօցիալիստ կուսակցութիւնը բոլորովին կը մերժէ իր աջակցութիւնը Ռուվիէի և կը տապալէ նրան, սակայն, նա վճռել է, ինչպէս հաղորդում են ֆրանսիական լրագիրները, առժամանակ պաշտպանել նրան, մինչև եկեղեցին պետութիւնից բաժանելու օրինագծի ընդունվելը և ապա տապալել նրան:

Շուէդ-Նորվեգիայի մէջ ծագած վէճը, որ եղբայրասպան նոր կռուի երկիւղն էր առաջացրել, լուծվեց խաղաղասիրաբար և շատ աջող: Նորվեգիան բաժանվեց վերջնականապէս Շուէդիայից և շուէդական Օսկար իմաստուն թագաւորը վաւերացրեց և ճանաչեց այդ բաժանումը մի գրչի հարուածով, որով և Նորվեգիան դարձաւ մի անկախ և ինքնուրոյն պետութիւն: Նորվեգիական ազգը կոչվեց պլեբիսցիտի միջոցով արտայայտել իր ցանկութիւնը, թէ կառավարութեան որ եղանակն է ընտրում—սահմանադրական միապետութիւն թէ հանրապետութիւն: Եւ շատերն են զարմանում, որ նորվեգիական անկախ ու ազատ ազգը մերժեց հանրապետական կառավարութեան ձևը ու ցանկութիւն յայտնեց ունենալ սահմանադրական միապետութիւն, ընտրելով միապետ Դանիայի թագաւոր Քրիստիան IX-ի թոռան, արքայ Կարլ Քրիստիան-Ֆրիդրիխին, որ ծնվել է 1872-ին: Սակայն զարմանալու ոչինչ չը կայ. նորվեգիական ազգը գտնում է, որ հանրապետութիւնը չէ կարող բերել իր հայրենիքին այն օգուտը և բարիքը, որ նա ակնկալում է: Հայրենասիրութիւնը աւելի բարձր դասվեց, քան վերացական գաղափարները:

Անգլիայում պահպանողական մինիստրութեան օրերը համարված են և բոլոր նշաններից երևում է, որ շուտով ազատամիտ կուսակցութիւնը կը կոչվի իշխանութեան: Այժմ Անգլիայում տիրում է նախընտրողական ագիտացիա: Արտաքին քաղաքականութեան մէջ, անվստահութիւնը և դժգոհութիւնը Գերմանիայի դէմ օրէցօր աճում է: Պարսկաստանի հետ նոր առևտրական դաշն կնքվեց, որի զօրութեամբ Պարսկաստանը այսուհետև իրաւունք չունի առանց Անգլիայի համաձայնութեան մաքսային նոր տարիֆներ ստեղծել: Ռուսաստանի վերաբերմամբ, ագիտացիա է լինում և տրամադրութիւն է ստեղծվում բարեկամական փոխադարձ համաձայնութեան գալ զանազան միջազգային հարցերի որոշման համար:

Թիւրքիայում, արհաւիրքների և սարսափների երկրում, ուր իշխում է Գլադստոնից Մեծ Մարդասպան կնքված սուլթան Աբդուլ-Համիդը, Մակեդոնիայի հարցը ստիպեց ի վերջոյ եւրոպական մեծ պետութիւններին հաւաքական ուլտիմատում ներկայացնել և սպառնալ նաւային ցոյցով, եթէ սուլթանը կը մերժէ ընդունել ֆինանսական կոնտրոլը: Սուլթանը, սկզբում յամառ, սկսեց զիջողութիւններ անել և վերջի վերջոյ սկզբունքով ընդունեց կոնտրոլը: Բայց գործադրութիւնը առ այդ դեռ անյայտ է:

Թշուառ Հայաստանը նորից մատնվեց սրածութեան և աւերի:

Պարսկաստանում Ռուսաստանի դէպքերը յուզմունք և ցնցումն են առաջ բերել և պարսիկ ժողովուրդն ևս սկսել է արթնանալ ու պահանջել մարդկային տարրական իրաւունքներ, որոնցից նա զրկված է Դարեհի օրերից...

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Նոյեմբերի 24-ին

Նորերս կառավարութիւնը դէպի իր հպատակ ազգութիւններն ունեցած բարի վերաբերմունքի մի հաստատուն ապացոյց էլ տուեց: Սալմաստի Իւլայ կոչված գիւղում (այս գիւղում խառն բնակվում են թուրք, հայ և ասորի ժողովուրդներ), մի կապից փախած՝ սեւլօր, իր գլխին հաւաքում է քանից աւելի սոված, կորած թուրքերի, և խորհուրդ է կազմում, նրանց ղեկավարի է հանում, նրանց ընչաքաղցութիւնը գրգռում դէպի հարևան քրիստոնեաները: Այդ սադայէլեան ժողովը, շուտով իր արդիւնքը պիտի ունենար, եթէ ողջամիտ, խաղաղասէր թուրքեր, որոնք բանից տեղեկացել էին, պէտք եղած տեղում (Թաւրիզ) իսկոյն հեռագրով զեկուցում չանէին այդ մասին, և հոգացողութիւն չխնդրէին: Ատրպատականի կենդրոնական կառավարութիւնը, Իւլայի այդ հերոսին անմիջապէս շղթայակապ Թաւրիզ է կանչում և սխրագործութիւնը դեռ իր սաղմի մէջ փչացնում: Զաբանենց գործի այդ արդարացի կարգադրութեան վերաբերմամբ, Շահի արևշատութեան համար քրիստոնեայ ժողովուրդներ, մաքուր սրտով աղօթք մրմնջեցին:

Ասում են նաև, որ Սալմաստի կենտրոնական աւանի թուրքերը յետին մտքով թէ եռանդութեամբ, մի հեռագրով դիմում են Վալիահդին և յայտնում, թէ հայերը պատրաստվում են, և նրա օգնութիւնը խնդրում: Վալիահդի պատասխանն այս է եղել, թէ դրա մասին այլևս իրան չդիմեն, թէ ինքը ցաւ պիտի զգայ, եթէ այդ տեսակ հարցով մի անգամ իրան զբաղեցնեն: Յիրաւի, արդար և խելօք պատասխան:

Երկու շաբաթից իվեր լսվում էր, թէ Շէյխ Մահմադ-Սըդըկ հանգիստ չի մնում, թէ անցեալ տարվայ նման դարձեալ պարսիկ իշխանութեան զբաղեցնում է իր ոտնձգութիւններով, վերջապէս ստուգվեց, որ Շէյխ-Իբադ-ուլլահի արժանաւոր զաւակ, Պարսկաստանի երկրի մաս կազմող երկու գիւղերը (որոնցից մեկ գիւղաքաղաք)—Լաջան և Շիրվանն, գրաւել-հանել է. այս րոպէիս դէմ-դէմի կանգնում են Շէյխի քրդերը և պարսիկ բանակը: Հաւատացնում են, որ Մահմադ-Սըդըկի քրդերի մէջ տեսնված են նաև օսմանեան զօրքեր: Այս լուրը սակայն ստուգութեան կարօտ է:—Շէյխի և Ջաֆար-աղայի միջև խնամութիւն կայ:

Չորս օր առաջ կարդաւորներ (քրդական մի ցեղ է Սօմայի գաւառում) Կաւարից (Թիւրքիա) 350-ի չափ սեւաւար (գոմէշ, եզ, կով) թալանեցին բերին, քրդի սեփականութիւն եղող: Մամադիները էլ մի ժամանակ Աղբակի քրդերից 2000-ի մօտ տաւար-ոչխար ասպատակեցին:—Առանց դրան չէր կարելի. մասամբ չափչխված քրդեր՝ ձիւն-ձմրան ինչպէս պիտի կարողանային անցկացնել. չէ որ այս տարի Սալմաստի հայի (նաև թուրքի) մալը անուշ անել չկարողացան...

Բարձրագոյն կողմից այստեղի կառավարիչների վրա թէև խիստ հրահանգներ յաճախ գալիս են, որ զգոյշ լինեն, արթուն մնան մի դէպք չպատահելու մասին, սակայն, [illegible] իրան զսպել չի կարողանում, իրան հասանելի սովորական տուրքերը հայ գիւղացիներից երկրորդ անգամ ուզում է գանձել. իր ֆերրաշները այլևայլ զարմանալի պատրուակներով հայ գիւղերն ուղարկում է և խարջլիղ (ծախք) հայթայթել տալիս: Այս առիթով, մի քանի հայ գիւղերի բնակիչներ, ահագին բազմութեամբ, հաւաքվեցին միասին խորհրդակցելու և, մի ճար հոգալու իրանց գլխին, սակայն գործը չյաջողվեց. որոշվեց, որ լաւագոյն է լռել, տանել, ժամանակի փափուկ լինելու պատճառով:

Յովհ.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

11 նոյեմբերի

ԲԵՐԼԻՆ, 10 նոյեմբերի: «Ֆօսսիշէ Ց.» լրագիրը նկատում է զեմստվային և քաղաքային գործիչների համաժողովի առիթով, որ զեմստվօները հաստատ հող կը գտնեն միայն այն ժամանակ, երբ կը պաշտպանեն կառավարութիւնը: Նրանք պէտք է մասնակցեն ադմինիստրացիայի բարելաւման գործին, ինչպէս միակ մարդիկ, բացի բիւրոկրատիայից, որոնք ծանօթ են վարչական պրակտիկայի գործի հետ: Հակառակ դէպքում նրանց վրա կընկնի բիւրոկրատիայի վնասակար գործունէութեան շարունակութիւնը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 նոյեմբերի: Պետերբուրգի հաշտարար դատարանների պաշտօնեաների երէկվայ ընդհանուր ժողովում վճռվեց կազմել մի դաշնակցութիւն՝ տնտեսականութիւնը բարելաւելու համար: „Петерб. Газ." հաղորդում է սինօդի գլխաւոր պրոկուրոր Օբոլենսկու խօսակցութիւնը: Խոստովանելով եկեղեցական ամուսնական բարենորոգումների անհրաժեշտութիւնը, Օբոլենսկին մեղադրում է հոգևորականութիւնը նրանում, որ նա մինչև օրս դեռ իր ձայնը չէ բարձրացրել եկեղեցական գործերում գոյութիւն ունեցող կարգերի դէմ: «Ինչպէս Վիտտէի կաբինէտի անդամ, ես, ասաց նա,—պէտք է յարմարեցնեմ իմ գործունէութիւնը ղեկավարող քաղաքականութեան ընդհանուր տարբերակի հետ»:—„Одес. Л." լրագրի խմբագիր Նաւրոցկուն իրաւունք է տրված իր լրագիրը հրատարակել առանց նախնական ցենզուրայի:

ԼՕՆԴՕՆ, 11 նոյեմբերի: «Stand.»-ը ասում է, որ Ռուսաստանի բարենորոգման կուսակցութիւնը պատրաստ է Վիտտէին ցոյց տալ օժանդակութիւն, քանի նա կը ջանայ իրականացնել հոկտեմբերի 17-ին խոստացված բարենորոգումները: Զեմեցներին կարելի է ողջունել, որ ընտրել են միակ ուղին: Զիջումը անհրաժեշտ է Վիտտէի խնդիրը աջող լուծելու. Վիտտէն սև օրերին կանգնեց ժողովրդի իրաւունքների պաշտպան: Ազատութեան խելացի կուսակից մարդը իրան պէտք է երջանիկ համարէ, որ Վիտտէն իր կողմն է:

ԿԵՕԼՆ, 11 նոյեմբերի. Օբեր-Բուրգոմիստրի նախագահութեամբ կայացաւ ժողով, կաթօլիկ և աւետարանական հոգևորականների ամենայայտնի անդամներից, պատգամաւորներից, պրոֆեսօրներից և ուրիշ գործիչներից. ժողովի նպատակն է կազմակերպել օգնութիւն ռուսական հրեաներին:

ՍՕՖԻԱ, 11 նոյեմբերի: Կայացաւ մակեդոնական յեղափոխական խմբի և կոմիտէտի միացումը: Սպասվում է յեղափոխական խմբի և կոմիտէտի միացումը: Սպասվում է յեղափոխական գործունէութեան կենդրոնացում:

ԼՕՆԴՕՆ, 11 նոյեմբերի: Կէմպբել-Բաններմանը, Բալֆուրի հաւանական յաջորդը, յայտնեց, որ իռլանդական ինքնավարութեան կողմնակից է:—Թիւրքական սուլթանի յամառութեան առիթով «Ստանդարտը» ասում է, որ սուլթանը նախապատւում է Եւրոպայի կողմից ամենավատ փորձանքները՝ իր ժողովրդի առջև ինքն իրան ստորացնելուն:

ՖԻԼԱԴԵԼՖԻԱ, 11 նոյեմբերի: Բարօն Ռօզէնը ամերիկական քաղաքական և հասարակական ակադեմիայում ասաց, որ հոկտեմբերի 17-ի մանիֆէստը բոլոր ռուսահպատակների համար նոր դարագլուխ բաց արեց: Կայսրը դրանով անմահացրեց իր անունը: Երբ կրքերը կը հանդարտվեն, նա յաւիտենական շնորհակալութեան կարժանանայ մարդկութեան 1/10 մասից:

ՓԱՐԻԶ, 11 նոյեմբերի: Figaro» լրագիրն ափսոսում է, որ ռուս լիբերալներն ուշ զգացին Վիտտէին օգնելու անհրաժեշտութիւնը: «Petite République»-ը ապացուցանում է ռուս ծայրայեղ կուսակցութիւններին այսուհետև գործադրվող բռնութիւնների վտանգը և աննպատակութիւնը:

ՍՈՒԴԺԱ, 11 նոյեմբերի: Աւերածութիւնները չեն դադարում: Զինւորական իշխանութիւնը պահանջում է զօրք ուղարկել:

ՓԱՐԻԶ, 11 նոյեմբերի: «Matin»-ի Լօնդօնից ստացած տեղեկութիւնների համեմատ, սուլթանը, նախատեսելով Միտիլէնի մաքսատան գրաւումը, բանկ-օթօմանից վերցրեց կանխավճար մի տարվայ եկամուտի չափով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 նոյեմբերի: Պօլուբօտաբինօվի այրին ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեանը ներկայացրել է 100,000 ռ.՝ աղքատ դպրոցներում գրադարաններ հաստատելու համար:

12 նոյեմբերի

ՌՕՍՏՕՎ-ԴՕՆԻ ՎՐԱ: Բօրսայի կոմիտէն հեռագիր ուղարկեց Վիտտէին, յայտնելով աջողութիւն և հաւատ՝ հոկտեմբերի 17-ի մանիֆէստի իրականացման աշխատանքների աջողութեան համար, մատնացոյց անելով Պետական Դումայի անհրաժեշտ և շուտափոյթ գումարման վրա:

ԲԵԼՕՍՏՕԿ, 12 նոյեմբերի: Դուման աչքի առաջ ունենալով Ռուսաստանի այժմեան կրիզիսը, որոշեց առաջարկել բոլոր քաղաքային գումարներին միանալ և միջնորդութիւն յարուցել ֆինանսների մինիստրութեան հողային բանկերի առաջ, որ կալուածատէրերին զանազան արտօնութիւններ տրվեն:

Կ. ՊՕԼԻՍ: Թիւրքական յիշատակագրի տոնը՝ Եւրոպական դեսպանների ներկայացրած Մակեդոնիայի ֆինանսական կոնտրոլի պահանջին իբրև պատասխան—վատ տպաւորութիւն առաջ բերեց դիպլօմատիական շրջաններում և գլխաւորապէս այն տեղը, ուր թագնված սպառնալիք է արտայայտվում, Թիւրքիայի հասարակական կարծիքի դժգոհութիւնը առաջ նետելով, և ուր ցոյց է տրվում որ մտքերի յուզված դրութիւնը կարող է աւելի սաստկանալ պետութիւնների ճնշման պատճառով և Բ. Դուռը իր վրայից վերցնում է ամեն պատասխանատուութիւն:

ԼՕՆԴՕՆ: Դիլկը Օքսֆորդում արտասանած իր ճառի մէջ այն կարծիքը յայտնեց, որ անգլօ-ճապօնական դաշնագիրը նպաստում է խաղաղութեան կնքման:

Գաղտնիք չէր, որ դաշնագրի նախնական բնագիրը փոխելու պատճառներից մէկը Բրիտանիայի ցանկութիւնն էր ուղղակի համաձայնութեան գալ Ռուսաստանի հետ, որը անշուշտ, կը տանէր Անգլիայից երաշխաւորված statu quo-ի ամբողջ շահը Հեռաւոր Արևելքում: Եթէ համաձայնութիւնը հիմնված լինէր Աւղանիստանի բաժանման վրա, ինչպէս ենթադրվում էր առաջ,—դա մեծ սխալ կը լինէր:

ՄՕՍԿՎԱ: Հրատարակված է բոլոր հին ծէսաւորների դաշնակցութեան կոչը, որով ռուսաց ամբողջ հին ծէսային հասարակութիւնը հրաւիրվում է միանալ հոկտ. 17-ի մանիֆէստի հիման վրա: Կոչի մէջ խօսվում է յեղափոխական տարրերի խլրտումների և հայրենիքին, նրանց հասցրած վնասի մասին և ռուս բնիկ ժողովուրդը հրաւիրվում է դիմադրութիւն ցոյց տալ ծայրահեղ կուսակցութիւններին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հրատարակվեցին Բարձրագոյն Ուկազներ, ներքին գործերի մինիստրի օգնականի և ոստիկանութեան կառավարչի, ինչպէս և Պետերբուրգի ընդհանուր նահանգապետների պաշտօնների վերացման մասին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Առաջին $4\frac{1}{2}$ տոկոսաբեր փոխառութիւնը—$94\frac{1}{4}$. առաջին ներքին խաղարկութեան փոխառութիւնը—430, երկրորդ փոխառութիւնը—332, երրորդը—$264\frac{1}{2}$: Մանթաշեանի ակցիան—165:

12 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Համառուսական արդիւնագործական և առևտրական առաջին հիմնադիր ժողովը վճռեց հետևեալ հեռագիրն ուղարկել Վիտտէին. «Այս րոպէիս կազմվեց համառուսական առևտրա-արդիւնաբերական դաշնակցութիւն: Առաջին ընդհանուր ժողովը, բաղկացած 700-ից աւելի առևտրա-արդիւնաբերական գործով զբաղվողներից, տեղեկացնում է ձեզ, որ դաշնակցութիւնը ցոյց կը տայ ամեն տեսակ հնարաւոր օժանդակութիւն կառավարութեանը, որ հիմնված կը լինի հոկտեմբերի 17-ին հռչակված սկզբունքների վրա»:

ՆՕՎՕՉԵՐԿԱՍԿ, 12 նոյեմբերի: Ազնուականների ժողովը որոշեց խնդրել, որ Դօնի ափերում կազմված կազակների 4 նոր գնդերը չուղարկեն ուրիշ տեղ, նրանց հարկաւոր համարելով Դօնի շրջանում:

ԲԱԹՈՒՄ, 12 նոյեմբերի: Հոկտեմբերի 17-ի օրը յաւերժացնելու համար քաղաքը ծրագրում է հիմնել ժողովրդական տուն:

ԹԵՀՐԱՆ, 12 նոյեմբերի: Ռուսաստանի վերջին դէպքերը Թեհրանի վրա այն ազդեցութիւնն արին, որ սկսվեց ուժեղ ագիտացիա: Հոգևորականութիւնը կծու քննադատութեան է ենթարկում կառավարութեան ներկայ եղանակը և գովաբանում է սահմանադրական ձևը. քարոզում են մզկիթներում, որոնք լիքն են ժողովրդով Ռամազանի տօնի պատճառով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 նոյեմբերի: Ժամանեց „Южн. Слово"-ի խմբագիր Գրոսմանը, որ ականատես է եղել հրէական և հողային շարժումներին, հարաւում: Գրոսմանը այդ խառնակութիւնների մասին զեկուցում է ներկայացնելու Վիտտէին: Նրա մէջ նա մատնացոյց է անելու այդ երկու շարժումների միջև եղած կապը, ծագման պատճառները և խաղաղացնելու միջոցները:

ՍԻԶՐԱՆ, 12 նոյեմբերի: Պօստ-հեռագրական բոլոր պաշտօնեաները, բացի 8 անձից, միացան պօստ-հեռագրական դաշնակցութեանը և պատգամաւորներ ուղարկեցին համաժողովին:

ԼՕՆԴՕՆ, 12 նոյեմբերի: Մատնացոյց են անում, որ կառավարութիւնը, չը ցանկալով կանգնել պարլամենտի առաջ, դրանով մի քանի շաբաթ յետաձգում է այն ընտրութիւնը, որ պէտք է կատարէ ինքը կամ պարլամենտն արձակելու և կամ հրաժարական տալու մէջ:

ՄՕՍԿՎԱ, 12 նոյեմբ: Զեմստվային և քաղաքային գործիչների այսօրվայ ժողովում քննվում էր Լեհաստանի ինքնավարութեան հարցը: Լէֆօրտեան և Սօկօլնիչեան շրջանի բանւորների խառնակութիւնները շարունակվում են: Բանւորները կողոպտեցին և աւերեցին գործարանները, մի քանի խանութներ, մի քանի գինետներ և այլն: Գործադուլ արած տան ծառաների, գլխաւորապէս իգական սեռի, թիւը հասնում է 5,000-ի: Գործադուլաւորները շրջում են փողոցներում և ստիպում աշխատող ծառաներին գործերը թողնել:

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 12 նոյեմբ: Երէկ երեկոյեան Սև-ծովեան նաւատորմի ծովային դիվիզիայի բակում, մի նաւաստի ատրճանակով վիրաւորեց ծովապետի երկրորդ օգնական Պիսարեւսկուն:

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 12 նոյեմբերի: Պետական դէպարտամենտում ցերեկվայ ժամը 4-ին կայացաւ ռուս-ճապօնական դաշնագրի փոխանակումը:

ԿԵԼՑԻ, 12 նոյեմբերի: Օլկուշի գաւառի Սլաւկով աւանը 12 օր շարունակ գտնվում էր յեղափոխականների իշխանութեան տակ: Տեղացիները, ինժեներ Սոյկովսկու ազդեցութեան տակ, հասարակական գործերը վարելու համար կազմեց մի կոմիտէտ, որը հաստատեց աւանի միլիցիան, ոչնչացրեց կառավարութիւնից Նորին Մեծութիւնների պատկերները, փակեց դպրոցը, գիւղական կառավարութեան մէջ մտցրեց լեհերէն լեզուն: Ուղարկված զօրքերը կարգը վերահաստատեցին: Սոյկովսկին ձերբակալված է:

13 նոյեմբերի

Կ. ՊՕԼԻՍ, 12 նոյեմբերի: Հրատարակված է իրադէ, որով հաւանութիւն է տրվում մինիստրների խորհուրդի որոշման, որը բացասապէս վերաբերվեց միջազգային ֆինանսական կոնտրոլ մտցնելուն Մակեդոնիայում: Բրիտանական դեսպանութեան թարգմանը ուղևորվեց Պիրէյ, Բրիտանական ծովային ույժերի հրամանատարի տրամադրութեան տակ: Ծովապետ Հէյսմին-փաշան ուղևորվում է Դարդանէլ, ասում են հրահանգներ է տանում նաւահանգստի հրամանատարին միջազգային էսկադրայի երևալու դէպքում: Նմանօրինակ հրահանգներ ուղարկված են Արշիպելագոսի կղզիների նահանգապետներին:

ԽԱՐԿՕՎ, 12 նոյեմբերի: Տեխնօլօգիական ինստիտուտում տեղի ունեցաւ սաստիկ հրդեհ. վառված է ծովային նոր կորպուսը:

ԿԻԵՎ, 12 նոյեմբ: Յառաջդիմական-սահմանադրական կուսակցութեան կոմիտէտը վճռել է հիմնել Կիևում իր յատուկ օրգանը աւելի արձակօրէն ծաւալելու համար իր մտքերն ու սկզբունքները, որոնք կազմում են կուսակցութեան ծրագիրը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 նոյեմբ: Անուանական ուկազով արձակված է Սիբիրիայի շրջանի պետական [illegible]: Համալսարանի Խորհուրդը որոշեց աչքի առաջ ունենալով բացառիկ պայմանները, ուսանողական [illegible] կիսամեակը հաշուել և թոյլատրել տալ վերջնական քննութիւնները ընթացիկ կիսամեակում: Լրագրերի հաղորդելով ոստիկանութիւնը վերակազմելու նախագիծը վճռել են յանձնել մշակելու համար մի առանձին խորհրդի՝ բաղկացած բոլոր վարչութիւնների ներկայացուցիչներից, որպէս նաև զեմստվօների և քաղաքների: Իսպրաւնիկի պաշտօնը միտք ունեն ընտրողական դարձնել: Ընտրութիւնը կը կատարեն զեմստվային ժողովները:

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 13 նոյեմբերի: Յամառ լուրեր են պտտում, թէ բերդի հրամանատարը և զօրաբաժնի գլխաւորը բանտարկված են, լուրերն ստուգվելու հնարաւորութիւն չը կայ: Շատ օֆիցերներ բռնված են խռովարարներից: Ժամի 4-ին տեղի ունեցաւ զինւորների, նաւաստիների և բանւորների միտինգ: Միտինգը կարմիր դրօշակներով և զինւորական երաժշտութեամբ խաղաղ անցաւ Բելօստօկի գնդի ներկայութեամբ, առանց սրա կողմից միտինգի մասնակցութեան: Բնակիչներից շատերը քաղաքից գնում են: Երեկոյին խռովարարները դադարեցնել տուին գնացքների երթևեկութիւնը:

ՍԻՄՖԵՐՕՊՕԼ, 13 նոյեմբերի: Սեվաստօպոլից եկաւ բազմութիւն ճանապարհորդների: Լիտովեան գնդի մի մասը, որ կանչված էր այստեղ, երեկոյին ուղևորվեց դէպի Սեվաստօպօլ:

ՄՕՍԿՎԱ, 13 նոյեմբերի: Զեմստվային համաժողովը, 166 ձայնի մեծամասնութեամբ 12-ի դէմ, ընդունեց լեհական հարցի վերաբերմամբ ռէզօլիւցիա, որը հաստատում է Լեհաստանի ինքնավարութեան վերաբերմամբ նախընթաց որոշումը: Ապա մեծամասնութեամբ ընդունվեցին ռէզօլիւցիաներ՝ վերացնել զինւորական դրութիւնը Լեհաստանում, մտցնել Պետական Դումայի ծրագրում Լեհաստանի ինքնավարութեան հարցը, և ցանկալի ժամանակաւոր միջոցներ ձեռք առնել Լեհաստանը հանգստացնելու համար: Գիշերվայ 12 ժամին նիստը սկսեց անուանական ձայնատուութեան ենթարկել ամբողջ ռէզօլիւցիան թէ համաժողովը ինչպէս պէտք է վերաբերվի կառավարութեանը և այն դրութեանը, որ ստեղծել է մանիֆէստը: Ռէզօլիւցիան ընդունվեց ամբողջապէս 156 ձայնով 12-ի դէմ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պաշտօնական: 1905 թւի նոյեմբերի 3-ի Բարձրագոյն մանիֆէստը և նրա հետ հրատարակված Բարձրագոյն անուանական ուկազները յայտարարում են այն առաջին միջոցները, որ այժմ ձեռք է առնում կառավարութիւնը գիւղական ազգաբնակութեան ամենակարևոր պահանջներին բաւարարութիւն տալու համար: Յետ գնման վճարները կիսով չափ կրճատվում են 1906 թւականից և բոլորովին վերացվում են 1907 թւից. այս բանը միջոց է տալիս գիւղացիներին պահել իրանց տրամադրութեան տակ, հաշուելով այդ վճարումների տարեկան քանակով, 45 միլիոն րուբլի 1906 թւին և մօտ 90 միլիոն րուբլի յետագայ տարիներում, մինչև յետ գնման շրջանի վերջը, որ մեծամասնութեան համար կը հասնէր ոչ վաղ քան 1931 թւականը: Յետ գնման վճարների ոչնչացումը յետաձգվում է մինչև 1967 թւականը նոյնչափ գումարներ ունենալ պետական եկամուտների մէջ և բացի դրանից անկարելի է արագ ժամանակամիջոցում, այն էլ Պետական Դումա գումարելու նախօրէքին իրագործել մի խոշոր վերանորոգում, որ վերաբերում է հարկատուութեան ամբողջ սիստեմին: Այդ սիստեմի վերանորոգման ենթադրութիւնները կառավարութիւնը կը մտցնէ Պետական Դումային: 1904 թւի օգոստոսի 1-ի մանիֆէստով մնացել են ապառիկներ անցեալ տարվանից միայն մօտ 10 միլիօն րուբլի, բացի դրանից մի քանի ապառիկներ էլ կը մնան այս տարվանից: Այդ բոլոր ապառիկները կը յետաձգվեն երկարատև ժամանակով և կը սկսեն հաւաքել փոքրիկ մասերով առանց ծանրութիւն պատճառելու գիւղացիներին: Բացի այն բանից որ գիւղացիների ձեռքում մնում են վերոյիշեալ գումարները, յետ գնման վճարների վերացումը դառնում են իրանց հողաբաժինների կատարեալ տէրեր և այդպիսով վերացվում են սահմանափակումները, որ կարգել է «Յետ գնման կանոնադրութիւնը»: Սրա մէջ է երկրորդ կարևոր կողմը նոյեմբերի 3-ի մանիֆէստով յայտարարված այն արտօնութեան, որ տրվում է գիւղական ազգաբնակութեան: Բարձրագոյն ուկազը գիւղական հողային բանկի գործունէութեան լայնացման մասին իր կողմից ստեղծում է հնարաւորութիւն, անելու այն ամենը, ինչ թոյլատրել է գիւղացիական հողատիրութեան ընդարձակման համար, մինչև որ Պետական Դուման կը քննէ այս հարցը: Գիւղացիները, որոնք կարող էին հող գնել միայն իրանց հաշուով, այժմ իրաւունք ստացան օգտվելու այդ նպատակի համար կրեդիտով, որին առաջներում բանկը դիմում էր միայն փոխառութիւններ տալու համար, մինչդեռ երբ ինքը բանկն է գնում հողերը, այդ ժամանակ կարելի է գնել նրանց իրական արժողութեան աւելի համապատասխանող գնով և զիջել արտօնված պայմաններով ամենից շատ կարիք ունեցող սակաւահող գիւղացիներին: Նոյեմբերի 3-ի ուկազով բարձր միջնորդական գործունէութիւնը, որի նպատակն է աջակցել գիւղացիներին ձեռք բերելու հողեր ուղղակի մասնաւոր տէրերից, յարմարեցրած է սակաւահող գիւղացիների հողերի բարեկարգութեան նպատակներին, թոյլ տալով փոխառութիւններ գնահատման ամբողջ գումարի չափով՝ ֆինանսների մինիստրի և հողային բարեկարգութեան ու երկրագործութեան գլխաւոր կառավարչի իշխանութեամբ: Վերջին պայմանը սահմանվում է, որպէս զի տեղի չունենան այնպիսի առուծախեր, որոնք բաւականաչափ ձեռնտու չեն կարող ազգաբնակութեան: Ինչպէս յետ գնման վճարների վերացումը միայն սկիզբը է հարկային բարեփոխութիւնների, այս լայնացումը պիտի ընդունվի ինչպէս սկզբնաւորութիւն իր նշանակութեամբ պետական բոլոր խնդիրների մէջ առաջ տեղ գրաւող գիւղացիական հարկերի բարեկարգման: Ապագայում ձեռք առնվելիք միջոցները այս ուղղութեամբ չէ կարելի որոշ նշանակել այժմեան ժամանակ: Ի զարգացումն Բարձրագոյն այն նախատրոշումների, որոնք տեղի ունեցան նոյեմբերի 3-ի ակտերի մէջ, կառավարութիւնը կը ներկայացնէ իր ենթադրութիւնները Պետական Դումային և ժողովրդի ընտրեալներից, որոնց մէջ կը լինեն և գիւղացիներ, իրանց կարիքների այդ լաւագոյն բացատրողները, պիտի կախված լինի որոշել ներկայ րօպէին աւելի համապատասխանող միջոցներ արդարացի կերպով ուշադրութիւն դարձնելու գիւղացիների կարիքների վրա, մասնաւոր սեփականատէրերի վրա և առհասարակ պետութեան պահանջների վրա։

ԽՐԻՍՏԻԱՆԻԱ։ Օրվայ 1 ժամ 30 րօպէին Նօրվէգիայի Թագաւորը և Թագուհին ժամանեցին։ Ազգաբնակութիւնը ոգևորված ողջունում էր։ Պալատում, ուր ուղևորվեց Թագաւորական զոյգը, հաւաքվեցին ստօրթինգի անդամները, որոնց անունից ողջունեց Թագաւորին նախագահ Բօրներ։ Յետոյ տեղի ունեցաւ դիպլօմատիական մարմնի և օտարերկրեայ նաւերի ծովապետների ընդունելութիւնը։ Երեկոյեան Թագաւորական զոյգը կառքով շրջում էր քաղաքում, որ փառաւոր կերպով լուսավառված էր։ Ազգաբնակութիւնը ամեն տեղ ոգևորութեամբ նրանց ողջունում էր։

ՄՕՍԿՎԱ, 12 Նոյեմբերի։ Վերջին յուզիչ դէպքերի առիթով բորսային ընկերութեան ընտրեալների խորհրդակցութեանը որոշված է խնդրել տեղական ադմինիստրացիային միջոցներ ձեռք առնել գործարանատէրերի սեփականութիւնը պաշտպանելու և գործարանների աւերումները դադարեցնելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12, Նոյեմբերի։ Ճիշտ չը դուրս եկան այն լուրերը թէ Գերմանիան մաքրում է Կիաօ-Չաօ։

Արտասահմանեան բօրսաներում անկայուն է, ռուսականներում թոյլ է, նոր 4 ու կէս տոկոսային փոխառութիւնը Բերլինում—94,50, ընտա Պարիզում—84, 50, Լիվէրպուլում—բամբակի հետ անկայուն է։

ՄՕՍԿՎԱ, 12 Նոյեմբերի։ Տելեֆօնային կայարանի գործադուլ արած ծառայողները այսօր արգելեցին տելեֆօնատէրերին մանել կայարանը. առիպված են փոխարինել դրանց սալդատներով։ Ալէքսանդր Գուչկօվ մերժեց քաղաքագլխութեան թեկնածութիւնը։

ՏՈՄՍԿ, 12 Նոյեմբերի։ Կամաց կամաց բացվում են հրէական մագազինները։ Դեռ էլի պատահում են անցորդների վրա յարձակման հատ հատ դէպքեր։

ԵԿԱՏԵՐԻՆՈՍԼԱՎ, 12 Նոյեմբերի։ Դունաեվի ծխախոտի գործարանում, Եարօսլավեան մեծ մանուֆակտուրայում և Նորսկայեա մանուֆակտուրայում վերսկսվեցին աշխատանքները։ Բանուորների պահանջների մի մասին բաւարարութիւն է տրված։

ԱԹԷՆՔ, 12 Նոյեմբերի։ Միջազգային էսկադրան կէսօրին ծովը դուրս եկաւ կնքված հրամաններով։ Անգլիական և ֆրանսիական ականաւերը այստեղ մնացին—էսկադրայի հետ հաղորդակցութիւնը պահպանելու համար։ (Հաւաս)։

ԼՕՆԴՕՆ, 12 Նոյեմբերի։ Առաւօտեան Մանչեստրում և շրջականերում զգացվում էր երկրաշարժ։ Խորտակվեցին գործարանային մի քանի խողովակներ։

ՓԱՐԻԶ, 12 Նոյեմբերի։ Նախագահ Լուբէն ողջոյն ուղարկեց Նօրվեգիական Թագաւորին Ֆրանսիայի անունից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 Նոյեմբերի։ Ծովային գլխաւոր շտաբի հաղորդագրութիւնը։ Կրօնշտադեան դէպքերը արձագանք գտան Չերնօմօրեան նաւատորմում։ Ծովապետ Չուխնինի զեկուցման համաձայն, նաւաստիները, սօցիալիստական պրօպագանդայի ազդեցութեան տակ, Սեվաստօպօլում սարքեցին մի շարք ցոյցեր։ Շարժումը տարածվեց զօրքի մի քանի մասերի վրա։ Ժողովում ծանր վիրաւորվեց ծովապետ Պիսարեվսկի։ Դրութիւնը լուրջ է, տացված զեկուցումների համեմատ, հիմք չը կայ կողոպուտից և աւերումից վախենալու։

ԲՕՐԻՍՕՎ, 12 Նոյեմբերի։ Նոյեմբերի 3-ի մանիֆէստը յետգնման հարկերը պակասեցնելու մասին նշանաւոր հանգստութիւն է մտցնում գիւղացիների մէջ։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ, 12 Նոյեմբերի։ Ֆինական և շվեդական ամենազդեցիկ լրագրերը միաձայն կողմնակից են սենատօրներ նշանակելու այն անձնաւորներին, որոնք գտնվում են սահմանադրականների ցուցակում, և յոյս են տածում թէ նոր գեներալ-նահանգապետը չի շեղվի սահմանադրական պետութիւնների կանոններից, կառավարիչ խորհուրդը մեծամասնութեան կուսակցութիւնից կազմել։

ՄՕՍԿՎԱ, 12 Նոյեմբ. Յուզմունքը Լեֆօրտովի և Սօկօլնիկի շրջանում բանուորների մէջ շարունակվում է։ Վերջին երկու օրերի ընթացքում նրանք յարձակման ենթարկեցին գործարանը, մի քանի արհեստանոցներ, գինեվաճառութեան երկու խանութներ, մագազիններ։ Կան վիրաւորուածներ։

ԲԵՐԼԻՆ, 12 Նոյեմբերի։ Կայսերական ծովային նոր նախահաշվում սովորական ծախսերը աւելացրել են 7 և 3/4 միլիօն մարկով, իսկ արտակարգ ծախսերը 8 միլիօնով։ Նոր նաւեր շինելու համար նշանակված է 4,700000 աւելի քան անցեալ տարին։ Ամենաշատ ծախքը լինելու է մի մեծ կրէյսերի համար, մօտ 18 ու կէս միլիօնի արժողութեան։ Շինվելու են մի երկրորդ ականաւոր նաւ, երկու նոր դիվիզիաներ ականակիրների աւելացրած արագնթացութեամբ։

13 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 Նոյեմբերի։ Մինիստրների խորհուրդը հաստատեց հաղորդակցութեան մինիստրի կողմից առաջարկված նախագիծը երկաթուղու ծառայողների դրութիւնը բարւոքելու համար 15 միլիօն րուբլի յատկացնելու մասին։ Այդ 15 միլիօն րուբլին պէտք է մացնուի հաղորդակցութեան մինիստրութեան առաջիկայ 1906 թ. նախահաշուի մէջ։

ՎՕԼՍԿ, 13-ին Նոյեմբերի։ Նամակներ են ցրված Նոյեմբերի 14-ին լինելիք հրէաների խանութների և տների աւերածութիւնների մասին, որոնց վրա խաչերով նշաններ են արված։ Խանութները տախտակներով մեխում են։ Ոստիկանապետը յայտարարութիւններով հրաւիրում է հանգիստ մնալ։ Վաճառականների և գործակատարների մէջ համաձայնութիւն կայացաւ տօն օրերը առևտուրը դադարեցնելու համար։

ԿԻԵՎ, 13 Նոյեմբերի։ Ոստիկանապետի պաշտօնակատար Գուկօվսկին յայտնում է, որ տեղական մի քանի լրագիրների տարածած լուրերը՝ քաղաքի ոստիկանների կողմից առաջարկված յայտագրի մասին—ճիշդ չեն։ Ոչ ոստիկանները և ոչ էլ ոստիկանութեան ուրիշ պաշտօնեաները յայտագիր չեն ներկայացրել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14-ին Նոյեմբերի։ Նորակազմ համառուսական առևտրա-արդիւնաբերական խորհրդի առաջին ժողովը, թւով մօտ 700 հոգի, յայտնում է ի գիտութիւն Վիտտէին, որ խորհուրդը ցոյց կը տայ իր կողմից կարողացածին չափ պաշտպանութիւն կառավարութեան, հիմնված հոկտեմբերի 17-ի Բարձրագոյն մանիֆեստի սկզբունքների վրա։

ՄՕՍԿՎԱ, 13 Նոյեմբերի։ Զեմստվային և քաղաքային գործիչների խորհուրդը յանձնարարեց բիւրօյին առաջիկայ ժողովին ներկայացնել Լիտվիայի, Վրաստանի և ուրիշ ծայրագաւառների ինքնավարութեան ծրագիրները։ Այսօրվայ ցերեկվայ ժողովը, նախագահութեամբ Նօվօսիլցովի բացուեց բիւրօյի առաջարկութիւնով որոշելու բիւրօյի անդամներից ներկայացուցիչներ ուղարկել կոմս Վիտտէի մօտ՝ ներկայացնելու ժողովի վերջնական վճիռը և լրացուցիչ բացատրութիւնները ժողովի որոշումները անյապաղ իրագործելու համար։

Ներկայացուցիչներ ուղարկելու վճիռը յարգվեց 86 ձայների առաւելութիւնով ընդդէմ 57-ի. երեք հոգի ձայնատուութիւնից հրաժարվեցին։ Խորհրդակցութեան ժամանակ առաջարկութիւն եղաւ հաւատ ընծայել Վիտտէի կառավարութեանը։ Ընթացիկ գործերի լրջութիւնը աչքի առաջ ունենալով, բիւրօն առաջարկեց Պետերբուրգում նոր ժողով կայացնել, եթէ որ պահանջ կը զգացուի մինչև երկու շաբաթ. յամենայն դէպս, հետևեալ ժողովը կայացնել Պետերբուրգում, դեկտեմբեր ամսում։ Երեկոյեան ժողովում կը քննուի հրէական հարցը։ Այսօր Գուչկօվ եղբայրները, Ստախօվիչը, Կրասօվսկին, Լիխաչեվը և Պետերբուրգի ուրիշ անդամները ներկայացրին առանձին կարծիք, ժողովի որոշման հակառակ, առաջարկելով ներկայ խառնակ ժամանակ թողնել կառավարութեանը առաջարկվելիք պահանջները, Վիտտէի կառավարութեանը հաւատ ընծայել, յետաձգել ընտրութիւնների եղանակի և Լեհաստանի ինքնավարութեան հարցերը մինչև Պետական Դումայի կոչվիլը։—Երէկ գործադուլ արեցին Մօսկվայի մետաղի գործարանի բանուորները. մոմի ընկերութեան բանուորներից շատերը հեռանում են, դրանցից մի մասը չուզեց առանց իրան հասանելիք փողը։ Դանիլօվեան մանուֆակտուրայի գործարանում արձակված են 1300 բանուորներ։ Ալէքսանդր Գուչկօվի քաղաքագլխի թեկնածութիւնից հրաժարվելու համար, առաջարկված է նրա եղբօր Նիկօլայ Գուչկօվի թեկնածութիւնը։ Նոյեմբեր ամսի վերջում կը կայանայ սահմանադրական-ռամկավարական կուսակցութեան ժողովը։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 13-ին Նոյեմբ։ Պետական հիմնարկութիւնները պաշտպանում են գնդւորները։ Պառմական դրօշակայրում տեղաւորված են թնդանօթաձիգները։ Երևում է, որ խաղաղութիւնը մօտալուտ է։ Ընդհարումներ չեն եղել։

ՍՈՒԶԱ, 13 Նոյեմբ։ Գաւառի հիւսիսային մասում ագրարական շարժումը դեռ չէ վերջացել։ Արևմտեան մասից յուզիչ լուրեր են գալիս։

ԽԱՐԿՕՎ, 13 Նոյեմբ։ Համալսարանում ընդունված են 87 ազատ ունկնդիր կանայք։

ԿԻԵՎ, 13 Նոյեմբ։ Նոյեմբերի 20-ից բացվում են կանանց մասնաւոր բարձրագոյն կուրսերը։

ԵԱԼՏԱ, 13 Նոյեմբ։ Եալտայում եղած ջարդի քննութիւնը նշանակված է Նոյեմբերի 22-ին։

Նոյեմբերի 13-ին

ԲԵՐԼԻՆ, 11 Նոյեմբերի։ Քննելով զեմստվային և քաղաքային գործիչների րեզօլիւցիան՝ «Տագէբլատտ» լրագիրն ասում է, որ րեզօլիւցիան ապահովեց Վիտտէի համար վճռական յենակէտ։ Ամեն տեղ աճում է վստահութիւնը դէպի կաբինէտը։ Այդ վստահութիւնը անհնարին կը լինէր, եթէ որ Վիտտէն գործով չապացուցանէր, որ լուրջ դիտաւորութիւն ունի իրագործել րեֆօրմները։ «Լօկալ Անցէյգէր» լրագրի խօսքով, Վիտտէի կառավարութեան վերաբերմամբ բռնելիք դիրքի մասին զեմստվային համաժողովի վճիռը վկայում է, որ կօմպրօմիս է կայացել չափաւոր և արմատական կուսակցութիւնների միջև, սակայն մինիստրութեանը աջակցելու պատրաստականութիւնը այն աստիճան աչքի է ընկնում, որ այդ փաստի մէջ պէտք է տեսնել առաջին քայլը Ռուսաստանի ներքին քաղաքական կեանքի պայմանները առողջացնելու։

ԲԱԼԿԻ, 11 Նոյեմբերի։ Նոյեմբերի 3-ի մանիֆէստը գիւղացիները շատ համակրութեամբ ընդունեցին։ Մանաւանդ շնորհակալ է հասարակութիւնը յետգնման վճարները վերացնելու համար։

ԴՄԻՏՐՕՎՍԿ, 11 Նոյեմբերի։ Գաւառում սկսվեցին ագրարային անկարգութիւններ։ Մի քանի կալուածքներում տեղի ունեցան ջարդեր, ուրիշներում, գիւղացիները ինքնակամ կտրատում են անտառը։ Այնտեղ կօզակներ գնացին։

ՎԱՐՇԱՎԱ, 11 Նոյեմբերի։ Երէկվան գնացքի խորտակման ժամանակ, Մլավսկայա ճիւղի վրա սպանվեցին երեք մարդ, ծանր վիրաւորվեցին 13, թեթև 14 հոգի։

ՄՕՍԿՎԱ, 11 Նոյեմբերի։ Նախագծվում է քաղաքային վարչութիւններում ծառայողների պատւիրակների համառուսական ժողով։ Յոյս ունեն տելեֆօնային հաղորդակցութիւն սահմանել երեկոյեան։ Կիևի սահմանադրական-պրօգրեսիվ կօմիտէտը և կրօնշտադեան Դուման համակրական հեռագիրներ ուղարկեցին Վիտտէին՝ յոյս դնելով նրա գործունէութեան աջողութեան վրա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 Նոյեմբերի։ Սամարայի հասարակական ապահովութեան կօմիտէտի պատգամաւորութիւնը միջնորդեց ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան առաջ, Սամարայում դպրոցներ բանալու մասին, որովհետև փողոցային ամբոխը տրամադրութիւն է ցոյց տալիս ջարդել չը դրավող և փողոցներում շրջող աշակերտներին։ Հարցի լուծումը կախված կը լինի նրանից, թէ ինչ պատասխան կը ստացվի նահանգապետից։ Կօմիտէտը հաշւում է իր կազմի մէջ 10,000 անդամ և նպատակ ունի զինազրկել կարգը խախտողներին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 Նոյեմբերի։ Սինօդը պարզել, որ հոգևոր դպրոցների րէֆօրմի հարցը Սինօդի առանձին հոգածութիւնների առարկան է կազմում։ Րէֆօրմներն անհրաժեշտ են։ Նախապատրաստական աշխատանքներին մասնակցելու համար հրաւիրված են բոլոր թեմական իշխանութիւնները, աստուածաբանական գիտութեան ներկայացուցիչները և ուսումնարանական գործին հմուտ ուրիշ անձինք։ Հարցը կը յանձնվի վերջնական լուծման համար առաջիկայ Համառուսական եկեղեցական ժողովին։ Սեմինարիայի աշակերտներին՝ աշխարհական բարձրագոյն դպրոցներ մտնելու թոյլատւութեան հարցին՝ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը հակամէտ է դրական լուծման տալ։

Տեղական տնտեսութեան գլխաւոր վարչութիւնը յայտարարում է, որ սուտ են այն լուրերը թէ խաղաղութեան դաշն կապելու առիթով այլ ևս նպաստներ չը պէտք է տրվեն պահեստազօրքից կանչված զինուորների ընտանիքներին։ Նպաստներ կը տրվեն մինչև կանչվածների հայրենիք վերադառնալը։ Զօրքը խաղաղ վիճակի մէջ դնելու մասին Բարձրագոյն հրամանը յայտարարվելու օրից մէկ տարի ժամանակամիջոց է տրված։

ՄՕՍԿՎԱ, 11 Նոյեմբերի։ Վիճաբանութիւններ լեհական հարցի վերաբերմամբ։ Սօլիգօվսկին Վարշավայից բողոքում է լեհերին մեղադրելու դէմ թէ նրանք ցանկանում անջատվել Ռուսաստանից։ Այդ մեղադրանքը հնարված է հին կազմը պահելու նպատակով։ Լեհերը դիմում են ազատ ռուս ժողովրդին՝ խնդրելով տալ լեհերին ապրելու ազատութիւն, զարգացնելով կուլտուրան յօգուտ սլաւօնականութեան և ռուս ժողովրդի։ Պեօտր Ստրուվէն գտնում է, որ ոչ թէ զինուորական դրութիւնը կարող է վերացնել անիշխանութիւնը լեհաստանում, որպէս Ռուսաստանում, այլ ազատամիտ վարչութիւնը և ինքնավարութիւնը։ Օտար պետութիւնների միջամտութիւնը երկիւղալի չէ։ Ռուսաստանը կարող է դրա դէմ կռուել։ Իշխան Ֆեօդոր Դոլգորուկով ասում է, որ սեպարատիզմի մեղադրանքը սուտ է, ինքնավարութիւնը սեպարատիզմ չէ։ Սլաւօնական պետութիւնների ապագայ ֆէդերացիայի մէջ Ռուսաստանը և Լեհաստանը ամենախոշոր դեր ունեն կատարելու։ Շատ ուրիշ հռետօրներ բողոքում են ինքնավարութիւնը սեպարատիզմի հետ խառնելու դէմ։ Կօշկարեօվ Կալուգայից՝ խնդրում է կառավարութիւնից յայտնել, որ լեհական հարցը պէտք է լուծվի անկախ գերմանական միջամտութեան վերաբերեալ խորհրդածութիւններից։ Կրասօվսկին Պետերբուրգից անհրաժեշտ է համարում ներկայացնել լեհական հարցի լուծումը Պետական Դումայի վճռին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
ՋԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային
Զ. Ի. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳՁԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. ՆԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ց. ԳՈՒՐԴԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

ԻՐԻԿՈՒՆՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց 5 և ծաղկահատ.։
Խ. Գ. ԱՐԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Գ. Ա. ՄԱՐԴԱՉԵԱՆ. Կատարում է միկրօ-քիմիական և բակտերիօլօգիական հետազօտութիւններ։

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

մշտական մահճակալներով։
Ելիզավէտինսկայա փողոց, 101, տելեֆօն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։

Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին հ. և էլեկտրօ-բուժութիւն։
Պ. Ն. ԴԵՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱԻԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Պ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՁԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի հ.
Պ. Ա. ԲԷՅԷՐ—երեխայոց և ներքին հ.

Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օպէրացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմէրներից։
(Հ.ու.կ.) 15—100

Բ Ժ Ի Շ Կ

Լեւոն Բաւոյեան

Վերադարձաւ Կովկասեան Հանքային Ջրերից և վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։ Միզանցասեռական, սիֆիլիս և կաշուի հիւանդութիւններ։ Առաւօտեան 9—12 ժամ, երեկոյեան 3—8 ժամ։ Միքայէլեան փողոց, № 55։ (ա.օ յ. օր.մ.) 30—30

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8։ (Ե.ռ.)29—100

ԲԺ. Ն. ՍԱՐԱՄԻՇԵԱՆ

Ներքին, մանուկների, կաշուի և վեներական հիւանդութիւնների համար։
Ընդունում է ամեն օր առաւօտեան 9—12 ժ.
երեկոյեան 5— 7 ժ.
Հասցէ—Երասխադեան հրապարակ № 9, մուտքը Շելկօվնիկեան փողոցից № 1։
(եր.հ.կ.) 4—20

Բ Ժ Ի Շ Կ

Բ. Ա. ՊԱՊՕՎԵԱՆ

Մասնագէտ—քթի, կոկորդի և ականջի։ Ընդունում է հիւանդներին—առաւ. 10—12½ ժ.
երեկ. 5— 7 ժ.
Հասցէն. Միքայէլեան փողոց տ. Թօրբերի № 157. 2—10

ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ

Բժիշկ Միխայէլ Գեդեվանովի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը
Կօրգանօվսկայա փող. № 20 Վերայում։ Սեղակեան տ., տելեֆօն № 791։ (ա. օ.) 29—150

ԲԺ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիսի, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտօվսկի և Պասկեվիչա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա.օ.) 17—100

Բ Ժ Ի Շ Կ

Լեւոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կադէտսկայեա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կադետսկի փողոցից № 2.
(ա. օ.) 53—300

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Թիֆլիսի Հրատարակչական ընկերութեան հրատարակած հետևեալ գրքոյկները։

	Կոպ.
№ 2. 26 Տղամարդ եւ 1 աղջիկ, Մ. Գորկիյի	5
№ 4. Կեանքի դասը, Ա. Ահարոնեանի	5
№ 5. Սպիտակ ծաղիկ, Կ. Օժէշկօի	3
№ 5. Արտիստը, Շիրվանզադէի	15
№ 8. Նապօլէօն, Խ. Խաչատրեանի	3
№ 9. Դանկօի սիրտը, Մ. Գորկիյի	3
№ 10. Իմ ուղեկիցը, նոյնի	10
№ 11. Մեծ փական, Վ. Փափազեանի	3
№ 12. Պայծառ հոգին, նոյնի	4
№ 13. Խեղճ ահաղաներ, նոյնի	5
№ 14. Սիրոյ հովիտը, Ա. Աթայեանի	3
№ 15. Վիշապ եւ ոս. զրոյց, Վ. Փափազեանի	5
№ 16. Երազ (Բալասի կ.) Մել.-Եսայեանի	3
№ 17. Երկու թռչուն, Վ. Փափազեանի	3
№ 18. Մի րուբլի, Մելիք-Եսայեանի	3

Գումարով գնողներին 30% զեղչ։ Ճանապարհածախսը նրանց հաշուին։
Դիմել՝ Въ Тифлисъ. Въ Правленіе Тифлисскаго Издат. Т-ва на Вельяминовской ул. 22, кв. 5. (կ. ե.) 2—2

ԱՂԱՉՈՒՄ ԵՄ
իմացողներին

Գօրիսեցի Խաչատուր Դարեանցի տեղը, որը մի քանի ամիս առաջ անյայտացել է Մերվից մօտ 30 տարեկան. իմացողներին խնդրում եմ յայտնել ինձ. Անդիժան, բուֆէտ վագզալի.
Գալուստ Դարեանց 2—6

ՄԻ ՓՈՐՁՎԱԾ
ՀԱՇՒԱՊԱՀ

որոնում է երեկոյեան պարապմունքներ, յանձն է առնում գրքերի պահելը, հաշւապահութեան կազմակերպելը, բարձի-թողի արված գրքերի ուղղում և հաշիւների կազմելը։ Կարող է կատարել և հայերէն լեզուով։ Դիմել № 146-դ պօստ-արկղ, Հաշւապահին։
(շ. կ. ե.) 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Երեքշաբթի, Նոյեմբերի 15-ին
կը ներկայացվի
«Գ Ա Լ Կ Ա»
օպերա 4 գործ. երաժ. Մօնիւշկօի։

Մասնակցում են տ.տ. Նօվօսպասսկայա, Նիկիտսկայա, պ.պ. Սլավին, Եվլախօվ, Դեմեանենկօ, Փիլիպպօվ, Շէյն։

Պարերը կը դնէ բալէտմէյստր պ. Բեկեֆի

Զինուորական երաժշտութիւն, I-ին Կաւկազի բատալիօնի պ. Րիշէրի ղեկավարութեամբ։

Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։

Աշակերտական տոմսակները ծախվում են ամեն օր «Location» կասսայում երեկոյեան 7¾ ժամից։

Տեղերի գները սովորական են։

Անօնս. Չորեքշաբթի, Նոյեմբերի 16-ին կը ներկայացվի վերանորոգումից յետոյ I-ին անգամ նոր պարագաներով «ԳԷՅՇԱ», օպերետկա Ս. Ջօնսի։

Ուրբաթ, Նոյեմբերի 17-ին կը ներկայացվի 4-րդ անգամ նոր օպերա «ԶԱԶԱ»։

Շաբաթ, Նոյեմբերի 19-ին գալա ներկայացում I-ին անգամ «ՉԵՐԵՎԻՉԿԻ», օպերա Չայկօվսկու։

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Աւագների ժողովը յայտնում է ի գիտութիւն պ.պ. անդամների և կանդիդատների, որ երեքշաբթիվանից նոյեմբերի 15-ից ժողովարանը բաց կը լինի։ (կ. ե.) 1—2

IX դասարանի

ՄԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ

ցանկանում է դասեր ունենալ. Համաձայնվում է դաս տալ ուտելիքի և բնակարանի փոխարէն։ Հասցէ. Николаевская № 29, բնակարան Իսրայէլեանի, հարցնել գիմնազիստուհին։ 1—2

Գերմաներէն դասեր

(Ըստ ցանկութեան՝ խմբական)
է տալիս մի տնային վարժուհի։ Троицкая № 7, Վարժուհիների փոխադարձ օժանդակութեան ընկերութիւն, ամեն օր—ժամը 2—5-ը ցերեկը։ Նոյն անձը որոնում է նաև մի փոքրիկ կահաւորված սենեակ։ 1—1

Հրատարակչական ընկերութիւն
«ՄՏ. ԼԻՍԻՑԵԱՆ և ԸՆԿ.»
Լոյս տեսաւ և ուղարկվեց գաւառական բաժանորդներին
«Օտարազգի հեղինակներ»
Վեց հատորեակի հատոր I
Էրկման-Շատրեան

ՄԻ ԳԻՒՂԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Վէպ 1789—1792 թ. ֆրանսիական յեղափոխութեան ժամանակից 340 մեծադիր երես
Գինն է 1 ր. 25 կ.։

Թիֆլիսի բաժանորդները իրանց օրինակները կարող են ստանալ «ՀԱՍԿԵՐԻ» խմբագրատանը (Բէհբութեան փ. № 25)։

Երկրորդ հատորը—Վօյնիչի «ԲՈՌ» վէպը լոյս կը տեսնի դեկտեմբերի վերջերին։
(կ. ե. կ.) 2—3

Հ. Առաքելեանի խմբագրութեամբ և հրատարակութեամբ լոյս տեսնող

ՄՆԵՄՈՊԵԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

մինչև այժմ լոյս չը տեսած հետևեալ գրքերը
IV ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ և IX ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

Այս ամառվայ ընդհատումից յետոյ սկսել են տպագրվել։ ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ (IX) գիրքը այս օրերս պատրաստ կը լինի և կուղարկվի բաժանորդներին։ Իսկ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ, որ ստուար և մեծ գործ է, չէ կարող շուտով լոյս տեսնել, ուստի որոշված է բաժանորդներին ուղարկել հետզհետէ լոյս տեսնող պրակներ։ Այս օրերս գաւառական բոլոր բաժանորդներին կուղարկվի պօստով, պատուիրած բանդերօլով 1) Առաջին պրակը—Ա տառը, 2) գրքի զունաւոր շապիկը, պատրաստված Վենետիկում և 3) գրքի կազմը, պատրաստված Պետերբուրգում։ Շապիկը և կազմը պէտք է պահել մինչև կստացվեն բառարանի բոլոր պրակները և ապա կազմել։

Հանրագիտական բառարանի նոր բաժանորդագրութիւն չէ ընդունվում առ այժմ։ Որ և է պահանջի կամ հասցէի փոփոխութեան մասին յայտնել այս հասցէով. Թիֆլիս, Հ. Առաքելեանին, խմբագրութիւն «Մշակ» լրագրի։ (շ. 2 անգամ) 2—4

ԴԻՊՕ

ԱՌԱՋԻՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
,,Եղբ. Յակոբջանեան եւ Սարգսեանց"

Պատրաստի հագուստեղէնի խանութում (Միքայէլեան կամուրջ, Բամբեան տուն № 25—30) մշտական ստացվում են մեծ քանակութեամբ կանանց, տղամարդկանց և երեխաների համար ամենավերջի ամառվայ սեզօնի տարազով պատրաստած հագուստներ։
Գները չափաւոր են և առանց սակարկութեամբ։ (շ. հ.) 80—100

13-й годъ изданія свободолюбивой ежедневной

ВСЕОБЩЕЙ МАЛЕНЬКОЙ ГАЗЕТЫ

2 р. за годъ С.-ПЕТЕРБУРГЪ Невскій пр. 139

Выходитъ безъ цензуры. Собственная типографія

Содержаніе: депеши и всѣ новости о **политикѣ, общественной** жизни, о Госуд. Думѣ, о народн. представительствѣ, о законахъ, о партіяхъ и союзахъ, о рабочихъ, о безпорядкахъ, о **наукахъ**, медицинѣ и техникѣ. о музыкѣ, **театрахъ**, и искусствахъ, **романы**, стихи, **картины** и **портреты**.

Подписная цѣна съ дост. и пересылкой за годъ 2 р. за полгода 1 р. за 3 мѣс. 50 к.

Марками на 20 к. дороже.

Редакторъ-Издатель А. Н. Молчановъ.

Բագուի հայոց նոր բացվելիք տղայոց և աղջկերանց ուսումնարանների համար

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ՝ ՄԻ ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ, ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐ

հետևեալ պայմաններով։ Դասագին որոշված է՝ մինչև 12 դաս 75-ական րուբլի վարձատրութիւն, իսկ 12-ից վեր 50-ական րուբլի։ Աւագ-ուսուցչի պաշտօնավարութեան համար որոշված է 500 ր. տարեկան վարձատրութիւն։ Աւագ-ուսուցիչը պիտի ունենայ ոչ աւելի քան 12 դաս։ Ուսումնական ցենզը թէ աւագ ուսուցչի և թէ ուսուցիչների և ուսուցչուհիների համար միջնակարգ դպրոցի ցենզից ոչ պակաս պիտի լինի։ Պահանջվում է մայրենի լեզուի կատարեալ հմտութիւն։ Ցանկացողները կարող են դիմել Բագուի հայոց եկեղեցիների ծխական հոգաբարձութեան ոչ ուշ քան 15-ին նոյեմբերի, խնդրագրի հետ ներկայացնելով բոլոր կարևոր դօկումենտները և մանրամասն տեղեկագիր նախընթաց պաշտօնավարութեան մասին։
Հասցէն. Баку, Парапетъ, д. армянскихъ церквей. (շ. հ. շ.) 2—3

1866. Մոսկվա — 1870. Ս.-Պետեր. — 1882. Մոսկվա — 1886. Նիժնի-Նովգ.

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ
եւ ուրիշ ռետինե գործուածքների համար
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ պարգեւի
(GRAND-PRIX)
ՓԱՐԻԶԻ ՅՈՒՑԱՀԱՆԴԷՍՈՒՄ
արժանացաւ Ռուսաստանի համար
ՄԻՄԻԱՅՆ
ՌԵՏԻՆԵՂԷՆՆԵՐԻ
ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ
ընկերութիւնը Ս. Պետերբուրգում որ հիմնված է 1860 թուին

[illegible] ,,ԼԵՕ" և С.-ПЕТЕРБУРГЪ [illegible]

Մեծ քանակութեամբ վաճառւում է
,,ՆԵՕՓՈԼԴ ՆԵՅՇԵԼԼԵՐԻ"
Մանուֆակտուրային Տանը
Ս. Պետերբուրգում, Մոսկվայում, Բեռլինում, Օդեսսայում, Եկատերինբուրգում, Ռոստովում (Դոնի վրա), Խարկովում, Իրկուտսկում, Տաշքենդում և
Թ.ՖԼԻՍՈՒՄ. 75—80

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. Ул. № 15.